2014թ. Միացյալ ժամի Ծրագիր

# Ընտանիքները հավերժ են

*«Եւ նա պիտի դարձնէ հայրերի սիրտը դէպի որդիքը եւ որդկանց սիրտը՝ դէպի իրանց հայրերը» (Մաղաքիա Դ.6):*

# Հրահանգներ Միացյալ ժամի և հաղորդության ժողովին երեխաների ելույթի համար

## Սիրելի Երեխաների Խմբի նախագահություններ և երաժշտության ղեկավարներ,

Այս տարի Երեխաների Խումբը հիանալի հնարավորություն կունենա օգնելու յուրաքանչյուր երեխայի հասկանալ ընտանիքների կարևորությունը մեր Երկնային Հոր ծրագրում: Երեխաները կսովորեն, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված է Աստծո կողմից, որ ընտանիքը կենտրոնական տեղ է զբաղեցնում Աստծո ծրագրում, և որ տաճարային սուրբ արարողությունների միջոցով ընտանիքները կարող են հավերժ միասին լինել: Միացյալ ժամի դասերը ամրացնում են այն, ինչ երեխաները սովորում են և ինչով ապրում են իրենց տներում: Վարդապետությունները, որոնք նրանց սովորում են, կամրացնեն նրանց ընտանիքներն այսօր և կօգնեն երեխաներին պատրաստվել լինելու հավատարիմ մայրեր և հայրեր ապագայում: Ամեն շաբաթ, երբ դուք աղոթքով պատրաստվեք և հրավիրեք Հոգին, ավետարանի ճշմարտությունները կհաստատվեն երեխաների սրտերում: Օգտագործեք հնարավորությունները՝ խրախուսելու երեխաներին կիսվել իրենց ընտանիքների հետ նրանով, ինչ սովորում և զգում են Երեխաների Խմբում:

Երեխաների Խմբի նախագահությամբ մենք աղոթում ենք ձեզ համար և գիտենք, որ Տերը կօգնի ձեզ ձեր կարևոր պարտականությունները կատարելիս: Երեխաներին և նրանց ընտանիքներին ուսուցանելու և ծառայելու ձեր նվիրյալ ջանքերը կամրացնեն նրանց: Մենք արտահայտում ենք մեր սերը և խորը երախտագիտությունը ձեր հավատարիմ ծառայության համար:

**Երեխաների Խմբի Գերագույն Նախագահություն**

**Կայքում առկա են.** *Այս գրքույկում նշված նյութերը, տեղեկությունները և ցուցադրական նյութերը առկա են LDS.org կայքի Երեխաների Խմբի բաժնում:*

## Հրահանգներ Միացյալ Ժամի համար

### Ավետարանի Ուսուցանում

Օգտագործեք այս գրքույկը, երբ պատրաստվում եք ամեն շաբաթ միացյալ ժամին 15-րոպե տևողությամբ դաս մատուցել: Դուք կարող եք ամենշաբաթյա դասերը համալրել Եկեղեցու կողմից հաստատված այլ նյութերով, ինչպիսիք են՝ *Ընկերը* կամ *Լիահոնան:* Հետևյալ ուղեցույցները կօգնեն ձեզ պլանավորել և մատուցել դասերը:

*Միրեք նրանց, ում ուսուցանում եք:* Երեխաների հանդեպ ձեր սերն արտահայտեք, սովորելով նրանց անունները և ծանոթանալով նրանց հետաքրքրություններին, տաղանդներին և կարիքներին:

*Հոգով ուսուցանեք վարդապետությունը:* Դասին պատրաստվելիս աղոթեք առաջնորդություն ստանալու համար և ձգտեք ամրապնդել ձեր վկայությունը այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ուսուցանելու եք: Դա կօգնի ձեզ Հոգով ուսուցանել:

**Ամեն շաբաթ ծրագրեք, թե ինչպես կարող եք (1) ներկայացնել վարդապետությունը, (2) օգնել երեխաներին այն հասկանալ, և (3) օգնել նրանց կիրառել այն իրենց կյանքում:**

*Սովորելու կոչ արեք:* Այս գրքույկը նախատեսված է օգնելու ձեզ իմանալ ոչ միայն *այն,* ինչ պետք է ուսուցանեք, այլև *ինչպես* պետք է ուսուցանել և սովորելու կոչ անել: Դուք ավելի արդյունավետորեն կուսուցանեք վարդապետությունը, եթե ամեն դասին կատարեք հետևյալ երեք կետերը.

1. Առանձնացրեք վարդապետությունը: Հստակ ներկայացրեք վարդապետությունը, որը երեխաները պետք է սովորեն: Մտածեք, թե ինչպես կարող եք դա անել բանավոր և տեսողական: (Որոշ օրինակների համար տես օգոստոսի երրորդ շաբաթվա և նոյեմբերի երկրորդ շաբաթվա դասերը:)

2. Օգնեք հասկանալ: Հետևեք, որ երեխաները խորապես հասկանան վարդապետությունը, օգտագործելով ուսուցանման տարբեր եղանակներ, որոնք ներգրավվում են նրանց ուսուցման մեջ, ինչպիսիք են՝ երգելը, դերակատարումները և սուրբ գրություններ ընթերցելը:

3. Խրախուսեք կիրառել: Երեխաներին հնարավորություն տվեք իրենց կյանքում կիրառել վարդապետությունը: Մտածեք, թե ինչպես նրանք կարող են արտահայտել տվյալ վարդապետության հետ կապված իրենց զգացումները կամ վարդապետության հետ կապված նպատակներ դնել:

Այս գրքույկը տրամադրում է լիարժեք դասեր տարվա որոշ շաբաթների համար: Մյուս շաբաթների համար տրվում են մտքեր, բայց ոչ լիրաժեք դասեր: Այստեղ տրված մտքերին ավելացրեք ձեր մտքերը: Դուք կարող եք գաղափարներ քաղել այս գրքույկի այլ դասեր կարդալով: Եթե ամիսը հինգերորդ կիրակի ունի, այդ դասաժամը օգտագործեք նախորդ դասերը վերանայելու համար: Հոգին կարող է ուղեկցել ձեզ, եթե դուք դասերի համար ծրագրեք և պատրաստեք վարժություններ:

Ձեր դասերին պատրաստվելիս աշխատեք երաժշտության ղեկավարի հետ: Երգերը կօգնեն ամրապնդել ուսուցանվող վարդապետությունները: Երբեմն դուք կարող եք հրավիրել ուսուցիչներին և իրենց դասարանները, որ օգնեն ձեզ ուսուցանել ավետարանի որոշ մասեր:

Որոշ դասեր առաջարկում են հրավիրել հյուր խոսնակների, որ մասնակցեն Երեխաների Խմբի դասին: Նախքան այդ անձանց հրավիրելը, դուք պետք է ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի համաձայնությունը ստանաք:

Դասերի հետ տրված են մի քանի ուսուցողական խորհուրդներ, որոնք կօգնեն բարելավել ձեր ուսուցանման ունակությունը: Դասերը նաև ընդգրկում են նկարներ, որոնք կօգնեն ձեզ ընկալել, թե ինչպիսին է վարժությունը: Թեպետ ուսուցանելու ունակությունները կարևոր են, ձեր հոգևոր պատրաստվածությունը և վկայությունը կիրավիրեն Հոգին՝ հաստատելու այդ վարդապետությունները երեխաների սրտում:

## Երգեցողության ժամ

Երեխաների Խմբի երաժշտությունը պետք է ստեղծի ակնածալի մթնոլորտ, ուսուցանի ավետարանը և օգնի երեխաներին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը և երգից բխող ուրախությունը: Միացյալ ժամի 20 րոպեն պետք է նվիրվի երգելուն ու երաժշտություն ուսուցանելուն: Այսպիսով, դուք բավականին ժամանակ կունենաք նոր երգ սովորեցնելու և օգնելու երեխաներին հաճույքով երգել:

Այս գրքույկում զետեղված է նոր երգ, որը երեխաները պետք է սովորեն այս տարի (տես 28–29 էջերը): Տրված է նաև «Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում» վերնագրով բաժին, որը ներառում է երեխաներին երգեր սովորեցնելու մտքեր (տես էջեր 26–27):

**Նախապատրաստություն.** *Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Եթե Հոգով պատրաստվեք և ուսուցանեք, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք: (Տես* ՈՒՉԱՄԿ, *13:)*

## Ուղեցույցներ հաղորդության ժողովի ելույթի համար

Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարության ներքո, հաղորդության ժողովին երեխաների ելույթն անց է կացվում տարվա չորրորդ եռամսյակին: Տարվա սկզբին, նախօրոք ծրագրերը քննարկելու նպատակով, հանդիպեք եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության խորհրդականի հետ, որը պատասխանատու է Երեխաների Խմբի համար: Երբ ծրագրերը վերջնական կլինեն, ստացեք նրա հավանությունը:

Ծրագրեք այնպես, որ երեխաները ներկայացնեն ծրագիրը միացյալ ժամի ամսական թեմաների հիման վրա: Տարվա ընթացքում գրի առեք երեխաների առանձին ելույթները և փորձառությունները՝ հնարավորության դեպքում հաղորդության ելույթի ժամանակ օգտագործելու համար:

Երբ ծրագրում եք, որ երեխաները կիսվեն այս տարվա թեմայի մասին իրենց սովորածով, մտածեք, թե ինչպես կարող են նրանք օգնել ներկաներին կենտրոնանալ ավետարանի այն վարդապետությունների վրա, որ իրենք են ուսուցանում: Նախագահության անդամներից մեկը կարող է ավարտել ժողովը ելույթի մասին կարճ ակնարկով:

Ելույթին նախապատրաստվելիս հիշեք հետևյալ ուղեցույցները.

- Փորձերը դասերից կամ ընտանիքներից անտեղի ժամանակ չպետք է խլեն:
- Հաղորդության ժողովին պատշաճ չէ օգտագործել ցուցադրական նյութեր, հատուկ հագուստներ և տեսանյութեր:

**Նյութեր.** *Դուք կարող եք գտնել ուսուցանման լրացուցիչ նյութեր, օրինակ՝ զունավորման էջեր, պատմվածքներ և վարժություններ* Ընկեր, Լիահոնա *ամսագրերում, մանկամսուրային դասագրքում և* Ավետարանի արվեստի գրքում: *Օգտագործեք այդ նյութերը ձեր դասերը լրացնելու համար: Նաև փնտրեք ավետարանի որոշակի թեմաներին վերաբերող նյութեր* Ընկեր*-ում՝ friend.lds.org կայքում: Այս միջոցները կարող են նաև տպվել և օգտագործվել երեխաներին ուսուցանելիս:*

## Այս գրքույկում օգտագործված աղբյուրներ

Այս գրքույկում օգտագործվել են հետևյալ հապավումները.

| | |
|---|---|
| *ԵԵ* | *Երեխաների Երգարան* |
| *ԱԱԳ* | *Ավետարանի արվեստի գիրք* |
| *ՈՒՉԱՄԿ* | *Ուսուցում՝ չկա ավելի մեծ կոչում* |

Շատ դասեր ներառում են առաջարկություններ նկարները օգտագործելու վերաբերյալ: Դուք կարող եք նկարներ գտնել *Ավետարանի արվեստի գրքում*, Երեխաների Խմբի ձեռնարկի նկարների հավաքածու-յում, Եկեղեցու ամսագրերում և images.lds.org կայքում:

## 2014թ. Ուսումնական Ծրագիր

### Ընդհանուր ծրագիր

Մանկամսուր. *Միա՛ ձեր փոքրիկները,* Արևաշող. *Երեխաների Խումբ 1,* Ըճ 4–7. *Երեխաների Խումբ 2,* Խիզախներ 8–11. *Երեխաների Խումբ 6*

### Հիմնական ծրագիր

Արևաշող. *Երեխաների Խումբ 1,* Ըճ 4–7. *Երեխաների Խումբ 2,* Խիզախներ 8–11. *Երեխաների Խումբ 4*

**Հունվար**

**Երգ. «Նա ուղարկեց Իր Որդուն»**
(ԵԵ, 34–35)

**Երաժշտություն** *օգտագործելու և այս ծրագրում ներառված երգերն ուսուցանելու առաջարկներ կարելի է գտնել 26–27 էջերում:*

**Հրավիրեք մասնակցել.** *Երեխաներն իրենց կարևոր են զգում, երբ մասնակցում են ուսման ընթացքին: Երբ հնարավոր է, հրավիրեք երեխաներին գրել գրատախտակին կամ կարդալ սուրբ գրությունները՝ ձեր փոխարեն:*

# Երկնային Հայրը Իր ներկայությունը վերադառնալու ուղի է նախապատրաստել ինձ համար

*«Որովհետև Աստուած այնպես սիրեց աշխարհիքը, որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես Գ.16):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. Ես Աստծո զավակն եմ և մի օր կարող եմ Նրա նման լինել:

**Առանձնացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ** *(նայելով նկարներ, երգելով երգ և կարդալով սուրբ գրությունները).* Ցույց տվեք երեխաներին փոքր կենդանիների նկարներ և հարցրեք, թե ինչ կենդանիներ կդառնան նրանք, երբ մեծանան (օրինակ՝ փիսիկը կդառնա կատու): Ցույց տվեք մանկան նկար և տվեք նույն հարցը: Բացատրեք, որ մարդկային երեխան տարբերվում է կենդանու ձագից. նա հատուկ է: Խնդրեք երեխաներին ուշադրություն դարձնել, թե ում զավակներն ենք մենք, երբ միասին կերգեք «Զավակն եմ Աստծո» երգը (*ԵԵ,* 2–3): Երեխաներից մեկին խնդրեք կարդալ Սաղմոս 82.6, ապա քննարկեք, թե ինչ է ուսուցանում երգը և ինչ է ուսուցանում սուրբ գրությունը: Գրատախտակին գրեք «Ես Աստծո զավակն եմ և մի օր կարող եմ Նրա նման լինել» և խնդրեք մի երեխայի բարձրաձայն կարդալ այն:

**Խրախուսեք կիրառել** *(կիսվելով).* Խնդրեք մի քանի երեխայի պատմել, թե ինչպես ես զգում իրենց ծնողի սերը: Բացատրեք, որ Երկնային Հայրը նույնպես ցանկանում է, որ մենք զգանք Նրա սերը: Կիսվեք, թե ինչպես եք դուք զգում ձեր հանդեպ Աստծո սերը և խնդրեք մի քանի երեխաներին կիսվել նրանով, թե ինչպես են իրենք զգում Նրա սերը: Խնդրեք երեխաներին լսել, թե ով է շշնջում մեզ Նրա սիրո մասին, միասին երգելով «Գիտեմ, Հայրս ապրում է» (*ԵԵ,* 5):

## Շաբաթ 2. Երկնային Հայրը տվել է Փրկիչ և հնարավոր է դարձրել ինձ համար վերադառնալ Իր ներկայություն:

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով Քավությունը).* Գրատախտակին գծեք ուղիղ ճանապարհ, որն ավարտվում է «Հավերժական կյանք մեր Երկնային Հոր հետ» վերնագրի մոտ: Ճանապարհի սկզբում դրեք մի մարդու նկար: Բացատրեք, որ նկարը ներկայացնում է բոլորիս և այն, որ մենք պետք է հետևենք այդ ճանապարհին՝ Երկնային Հոր մոտ վերադառնալու համար: Ասացեք երեխաներին, որ մենք չենք կարող վերադառնալ Երկնային Հոր մոտ ինքնուրույն: Ջնջեք ճանապարհի մի մասը և հարցրեք. «Ի՞նչը կարող է մեզ օգնել շարունակել այդ ճանապարհը»: Երեխաներից մեկին խնդրեք կարդալ կամ արտասանել հավատո երրորդ հանգանակը: Ցույց տվեք Քրիստոսը Գեթսեմանիում նկարը և համառոտ բացատրեք, թե ինչ է Քավությունը: Ասացեք երեխաներին, որ Քրիստոսի Քավությունը նման է կամրջի, որը կօգնի մեզ վերադառնալ Երկնային Հոր մոտ. եթե մենք ապաշխարենք և հնազանդվենք պատվիրաններին, մենք կկարողանանք կրկին Նրա հետ ապրել: Գրատախտակին կամուրջ նկարեք և տեղափոխեք մարդու նկարը ճանապարհի վերջը: Մի քանի երեխաների խնդրեք կիսվել Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության վերաբերյալ իրենց զգացմունքներով: Եթե ժամանակը թույլ է տալիս, երգեք «Ես ապրում էի երկնքում» (*ԵԵ,* 4):

## Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսը ինձ համար կատարյալ օրինակ է:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(քննարկելով օրինակներ).* Հարցրեք. «Ո՞վ է մեզ համար լավ օրինակ հանդիսանում»: Գրատախտակին գրեք կամ խնդրեք երեխաներից մեկին գրել պատասխանները, ներառյալ՝ Հիսուս Քրիստոսը: Բացատրեք, որ այդ բոլոր մարդիկ *լավ* օրինակներ են մեզ համար, բայց Հիսուսը կատարյալ օրինակ է: Ասացեք երեխաներին, որ Նա «մեկ եկաւ բարի անելու» (Գործք 10.38) և ցույց տվեց Իր սերը, ծառայելով մյուսներին, և Նա ցանկանում է, որ մենք հետևենք Նրա օրինակին:

**Օգնեք հասկանալ** *(լսելով պատմվածքներ և նկարներ նկարելով).* Երեխաների Խմբի դասից առաջ խնդրեք չորս չափահասների պատրաստված գալ համառոտ քննարկելու համար հետևյալ նկարներից և սուրբ գրություններից մեկը և թե ինչպես մենք կարող ենք հետևել Հիսուսի օրինակին:

*Հովհաննես 13.14-15*

*Մատթեոս 5.1-2*



*Ղուկաս 15.4-7*

*3 Նեփի 17.1–10*

*Դասարանների ուսուցիչները կարող են օգնել վարել փոքր խմբային քննարկումներ, խրախուսել մասնակցություն և պահպանել ակնածալից մթնոլորտ:*

Երեխաներին բաժանեք չորս խմբերի և յուրաքանչյուր խմբին մեկ չափահաս կցեք: Երեխաներին խնդրեք լսել, ինչ է չափահասը պատմում Փրկչի մասին, ապա խնդրեք նրանց նկարել կամ գրել թղթի վրա, թե ինչպես իրենք կարող են հետևել Հիսուսի օրինակին: Հրավիրեք յուրաքանչյուր խմբից մեկ երեխայի կիսվել իրենց սովորածով մնացած երեխաների հետ:

**Խրախուսեք կիրառել** *(երգ երգելով).* Երգեք «Փորձում եմ լինել Հիսուսի նման» (*ԵԵ,* 78–79): Խնդրեք երեխաներին այս շաբաթ հետևել Հիսուսի օրինակին և պատրաստ լինել զեկուցելայդ մասին հաջորդ շաբաթ:

**Հուշում.** *Փրկիչը չպետք է պատկերվի երեխաների կողմից ներկայացման ժամանակ:*

## Շաբաթ 4. Ես կարող եմ վերադառնալ Երկնային Հոր մոտ, հետևելով Հիսուս Քրիստոսին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(կրկնելով).* Նկարեք գրատախտակին շաբաթ 2-ի ճանապարհը: Խնդրեք երեխաներին բացատրել, թե ով է հնարավոր դարձրել Երկնային Հոր մոտ վերադառնալը: Մի քանի երեխաների խնդրեք պատմել, թե ինչպես են իրենք հետևել Քրիստոսի օրինակին անցած շաբաթ: Նրանց հրավիրեք կիսվել այլ եղանակներով, որոնցով կարող են հետևել Հիսուսին (օրինակ՝ մկրտվելով, աղոթելով և հնազանդվելով պատվիրաններին): Նրանց պատասխանները գրեք գրատախտակին:

**Օգնեք հասկանալ** *(լսելով սուրբ գրության պատմվածք).* Պատմեք Իր Առաքյալներին կանչելու Հիսուսի պատմությունը (տես Մատթեոս Դ.18–22), և հրավիրեք երեխաներին կատարել

ձեզ հետ գործողություններ: Օրինակ՝ «Պետրոսը և Անդրեասը վաստակում էին իրենց ապրուստը ձուկ որսալով: Մի օր, երբ իրենց ուռկանը նետեցին Գալիլեայն ծովը *(ուռկան նետեք),* նրանք տեսան Հիսուս Նազովերցուն: Նա ասաց նրանց *(ձեռքը դրեք ականջին).* «Ինձ հետևիրեք»: Թեև Պետրոսը և Անդրեասը աշխատանքի մեջ էին *(քաշեք ուռկանները),* նրանք անմիջապես թողեցին իրենց ուռկանները *(գցեք ուռկանները),* և հետևեցին Նրան *(քայլեք տեղում):* Հակոբոսը և Հովհաննեսը մեկ այլ նավակի մեջ վերանորոգում էին իրենց ուռկանները *(կարեք ուռկանները):* Հիսուսը կանչեց նրանց, և նրանք թողեցին իրենց ուռկանները և հետևեցին Նրան *(քայլեք տեղում)»:* Երեխաներին հարցրեք, թե արդյոք նրանք կթողնեին այն, ինչ անում էին, եթե Փրկիչն ասեր իրենց. «Ինձ հետևիր»: Խնդրեք յուրաքանչյուր դասարանին կազմակերպել մնացած երեխաների հետ լողալու կամ խաղալիքներով խաղալու մնջախաղ: Խնդրեք նրանց դադարել այն, ինչ անում են, և քայլել տեղում, երբ լսեն «ինձ հետևիր» խոսքերը: Յուրաքանչյուր գործողության մնջախաղից հետո բարձրացրեք Հիսուս Քրիստոսի նկարը և մեղմ ասացեք. «Ինձ հետևիր»:

**Խրախուսեք կիրառել** *(քննարկելով օրինակներ).* Խնդրեք երեխաներին կիսվել այսօր Հիսուս Քրիստոսին հետևելու ճանապարհներով: Օրինակ, նրանք կարող են համաձայնվել, երբ ծնողը խնդրում է ասել ընտանեկան աղոթքը կամ ուսուցիչը խնդրում է ակնածալից լինել:

**Ուսուցանեք Հոգով.** *Միացյալ ժամին պատրաստվելիս աղոթեք առաջնորդության համար և փնտրեք Հոգու ազդեցությունը: Եթե Հոգով պատրաստվեք և ուսուցանեք, Նա կհաստատի այն ամենի ճշմարտացիությունը, ինչ ուսուցանում եք:*

**Փետրվար**

# Երկնային Հայրը ծրագիր ունի Իր զավակների համար

**Երգ. «Ես կհետևեմ Աստծո ծրագրին»**
(ԵԵ, 164–65)

*«Օհ, որքան մեծ է մեր Աստծո ծրագիրը» 2 Նեփի 9.13:*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. Երկնային Հայրը ծրագիր ունի Իր զավակների համար:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(հնչեցնելով վարդապետությունը).* Խնդրեք երեխաներին գալ բոլորի դիմաց: Առաջին երեխային խնդրեք ասել՝ «Երկնային Հայրը», երկրորդին՝ «ծրագիր ունի», և երրորդին՝ «Իր զավակների համար»: Երեխաներին բաժանեք երեք խմբի և խնդրեք յուրաքանչյուր խմբին կանգնել և երեք ղեկավար երեխաների օգնությամբ կրկնել նախադասության իրենց մասը: Կրկնեք մի քանի անգամ, տալով բոլոր խմբերին յուրաքանչյուր արտահայտությունն ասելու հնարավորություն:

**Օգնեք հասկանալ** *(կարդալով սուրբ գրությունները).* Բացատրեք, որ ծնվելուց առաջ մենք ապրում էինք երկնքում մեր երկնային ծնողների հետ: Երկնային Հայրը ցանկանում էր, որ մենք ավելի նմանվեինք Իրեն, և ներկայացրեց մի ծրագիր: Գրատախտակը բաժանեք երեք հատվածների և վերնագրեք դրանք՝ «Նախաերկրային կյանք», «Մահկանացու կյանք» և «Կյանք մահից հետո»: Համառոտ քննարկեք դրանցից յուրաքանչյուրը (տես *Հավատքին հավատարիմ. Ավետարանական վկայակոչում* [2004], 115–17): Բաժանեք երեխաներին փոքր խմբերի և յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ սուրբ գրություններից մեկը կամ մի քանիսը. Ծննդոց Ա.1, Ալմա 12.24, Ալմա 34.32, Ալմա 40.12, Վարդապետություն և Ուխտեր 76.62, Մովսես 4.2, Աբրահամ 3.22–23: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին կարդալ իրենց սուրբ գրությունները, պատմել մյուս երեխաներին, թե ինչի մասին են սուրբ գրությունների իրենց հատվածները, և գրել հղումը գրատախտակին՝ ճիշտ վերնագրի տակ

**Խրախուսեք կիրառել** *(նկարներ նկարելով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթի երրորդ մասը: Խնդրեք նրանց նկարել մի նկար, որը ներկայացնում է Աստծո ծրագրի մի մասը (նախաերկրային կյանք, մահկանացու կյանք և կյանք մահից հետո): Խրախուսեք նրանց կիսվել իրենց նկարներով տանը՝ իրենց ընտանիքների հետ: Միասին երգեք «Ես կհետևեմ Աստծո ծրագրին» (ԵԵ, 164–65):

**Ցուցադրական նյութեր.** *Երեխաները լավ են ընդունում ցուցադրական նյութերը: Մտածեք տարբեր ցուցադրական նյութեր օգտագործելու մասին, ներառյալ առարկաներ, գրատախտակի նկարներ, բառաշերտեր, նկարներ և խաղատիկնիկներ (տես* ՈՒՉԱՄԿ, *89–90):*

## Շաբաթ 2. Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին ստեղծել Երկիրը՝ որպես տուն Իր զավակների համար:

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով նկարներ).* Բացատրեք, որ որպես Երկնային Հոր ծրագրի մաս մենք պետք է հեռանայինք Նրա ներկայությունից, այդ պատճառով Երկնային Հայրը պատվիրեց Հիսուս Քրիստոսին երկիր ստեղծել մեզ համար: Սենյակի տարբեր մասերում ցուցադրեք մի քանի արարումների նկարներ (օրինակ՝ արև, լուսին, ջուր, բույսեր և կենդանիներ): Երեխաներից մեկին խնդրեք վերցնել նկարը և դնել գրատախտակին: Քննարկեք, թե ինչու է այս արարումը կարևոր մեզ համար: Շարունակեք մինչև բոլոր նկարները տեղադրվեն գրատախտակին: Խնդրեք երեխաներին լսել, թե ինչու են դրանք ստեղծվել, մինչ մեկը կկարդա Վարդապետություն և Ուխտեր 59.18–19:

**Խրախուսեք կիրառել** *(նկարելով նկարներ).* Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթի մի կտոր և խնդրեք նկարել իրենց սիրված արարումը: Երգեք «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ» (ԵԵ, 228–29):

## Շաբաթ 3. Իմ մարմինը ստեղծվել է Աստծո պատկերով

**Առանձնացրեք վարդապետությունը** *(տեսնելով արտացոլումը).* Մի քանի երեխաների դիմաց հայելի պահեք և խնդրեք նրանց նկարագրել այն, ինչ տեսնում են (աչքեր, բերան, և այլն)։ Բացատրեք, որ այն, ինչ նրանք տեսնում են իրենց իսկ «պատկերն է»։ Խնդրեք երեխաներին լսել, թե ում պատկերով ենք մենք ստեղծվել, մինչ մեկը կկարդա Ծննդոց Ա.27։ Բացատրեք, որ Աստված ունի աչքեր, ականջներ, բերան և այլն, և այդ պատճառով մենք նույնպես դրանք ունենք։ (Տարիքով ավելի փոքր երեխաներին կարող եք խնդրել շարժել մարմնի տարբեր մասերը, մինչ դուք կբացատրեք, որ Աստված նույնպես ունի այդ մասերը։)

*Երեխաներին մասնակցել թույլատրելը հնարավորություն կտա նրանց ակտիվ դեր խաղալ ուսման ընթացքում։*

**Խրախուսեք կիրառել** *(խաղ խաղալով).* Նկարեք կամ գրեք մարմնի տարբեր մասերի անունները թղթե կամ այլ խորհանարդի ամեն կողմին։ Խնդրեք երեխաներին փոխանցել այն սենյակով, լսելով կամ երգելով «Տերն ինձ տաճար է տվել» երգը (*ԵԵ,* 153)։ Անսպասելի կանգեցրեք երաժշտությունը և խնդրեք նրան, ում ձեռքում հայտնվել է խորհանարդը, գցել այն։ Հարցրեք. «Ինչպե՞ս է Երկնային Հայրը ցանկանում, որ դուք օգտագործեք մարմնի այս մասը կամ հոգ տանեք դրա մասին»։ Շարունակեք այնքան, որքան ժամանակը թույլ է տալիս։

*Թղթե խորհանարդը կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում։*

## Շաբաթ 4. Ընտրության ազատությունը պարգև է, որի շնորհիվ ես կարող եմ ինձ համար ընտրություն կատարել։

**Առանձնացրեք վարդապետությունը** *(վարելով առարկայական դաս).* Բերեք մի քանի առարկաներ, որոնցից երեխաները կարող են ընտրություն կատարել։ Օրինակ, կարող եք բերել երկու տարբեր տեսակի միրգ, մատիտ և գրիչ, կամ տարբեր տեսակի կոշիկներ։ Մի քանի երեխայի խնդրեք ընտրել առարկաներ։ Բացատրեք, որ ընտրության ունակությունը պարգև է, որը կոչվում է «ընտրության ազատություն», և որ մենք ազատ ենք ընտրելու, սակայն ամեն մի ընտրության հետ գալիս է իր հետևանքը։

**Օգնեք հասկանալ** *(կարդալով սուրբ գրություններ).* Ասացեք երեխաներին, որ երբ մենք հոգիներ էինք նախաերկրային կյանքում, մենք օգտվեցինք մեր ընտրության իրավունքից ճիշտ ընտրություն կատարելով. մենք բոլորս ընտրեցինք Երկնային Հոր ծրագրին հետևելը։ Որևէ մեկին խնդրեք կարդալ 2 Նեփի 2.27։ Քննարկեք, թե ինչ են սուրբ գրություններն ուսուցանում Հիսուս Քրիստոսին հետևելն ընտրելու և չընտրելու հետևանքների մասին։

**Խրախուսեք կիրառել** *(դերակատարությամբ).* Յուրաքանչյուր դասարանին հրավիրեք դերակատարությամբ ներկայացնել մի իրավիճակ, որում իրենք կարող են օգտագործել որևէ պատվիրանի հետևելու իրենց ազատ ընտրությունը։ (Օրինակ, նրանք կարող են ներկայացնել, թե ինչպես են հնազանդվում իրենց ծնողներին կամ կիսվում ընկերոջ հետ խաղալիքով։) Խնդրեք մյուս երեխաներին քննարկել իրենց ընտրությունների լավ հետևանքները։

**Նախապատրաստություն.** *Ձեր միացյալ ժամերը պլանավորելիս, նախ կարդացեք ամսվա համար նախատեսված բոլոր դասերը։ Այնուհետև հավասարապես բաշխեք ձեր ծրագրվող վարժությունները՝ համաձայն ձեր ունեցած ժամանակին և Երեխաների Խմբի կարիքներին։ Օրինակ, դուք կարող եք մի շաբաթ վարել երկար դասի կեսը և ավարտել այն հաջորդ շաբաթ, կամ կրկնել կարճ վարժությունները՝ օգնելով երեխաներին վերհիշել։*

**Մարտ**

**Երգ. «Ես մնում եմ զարմացած»**
(*Օրհներգեր*, h. 193)

# Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է

*«Եւ մենք տեսանք եւ վկայում ենք, որ Հայրն իր Որդուն ուղարկեց աշխարհքի Փրկիչ լինելու» (Ա Հովհաննես Դ.14):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք երեխաներին ներկայացնել վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. Ես կարող եմ ստանալ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(լսելով պատմվածք).* Պատմեք հետևյալ պատմությունը. «Երբ Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը երեխա էր, նա վատ երազ տեսավ և սկսեց լաց լինել: Նրա տատիկը գրկեց նրան, հանգստացրեց և ասաց, որ նա նրանք ապահովության մեջ է են, քանի որ Հիսուս Քրիստոսը հսկում է նրանց: Նա հանգիստ գնաց անկողին, վստահ լինելով, որ Հիսուսը հսկում է մեզ»: Երեխաներին ասացեք, որ այս փորձառությունն օգնեց Նախագահ Ֆաուստին վկայություն ստանալ Հիսուս Քրիստոսի մասին (տես "A Growing Testimony," *Ensign*, Nov. 2000, 53):

**Օգնեք հասկանալ** *(խաղ խաղալով).* Պատրաստեք 10 բառաշերտ, որոնք նկարագրում են այն բաները, որոնք օգնում են վկայություն ստանալ, և մի քանիսը, որոնք խանգարում են (բառաշերտերի նմուշներ կարելի է գտնել sharingtime.lds.org կայքում): 10 հանգույց պարունակող երկար պարան կամ լար տեղադրեք հատակին: Երեխաներից մեկին խնդրեք կանգնել պարանի մի ծայրի մոտ և և պահել մի ցուցանակ, որի վրա գրված է «Վկայություն Հիսուս Քրիստոսի մասին»: Մեկ այլ երեխայի խնդրեք կանգնել պարանի մյուս ծայրի մոտ «Ես կարող եմ ստանալ» ցուցանակով: Խնդրեք մի երեխայի վերցնել մի բառաշերտ և բարձրաձայն կարդալ այն: Եթե այն նկարագրում է մի բան, որն օգնում է մեզ վկայություն ստանալ, խնդրեք «Ես կարող եմ ստանալ» ցուցանակով երեխային առաջ գալ, հասնելով առաջին հանգույցին: Եթե այն չի օգնում վկայություն ստանալուն, խնդրեք երեխային մնալ տեղում: Կրկնեք, մինչև որ երեխան հասնի պարանի մյուս ծայրին: Խնդրեք բոլորին ասել. «Ես կարող եմ ստանալ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին»: Բացատրեք, որ մեր վկայությունները երբեք չեն դադարում աճել. եթե մենք շարունակում են հետևել Հիսուս Քրիստոսին և ճիշտ ընտրություններ կատարել մեր կյանքի ընթացքում, դրանք կշարունակեն ավելի կամրանալ

## Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ես կարող եմ ապաշխարել և ներվել իմ մեղքերից:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(քննարկելով սուրբ գրություններ).* Ցուցադրեք Հիսուս Քրիստոսը Գեթսեմանիում նկարը և համառոտ վերհիշեք Քավությունը (տես Ղուկաս ԻԲ. 39–44): Հրավիրեք մեկին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 19.16 և խնդրեք երեխաներին լսել, թե ինչ իրենք պետք է անեն Քավության օրհնությունները վայելելու համար:

**Օգնեք հասկանալ.** *(լսելով սուրբգրքյան պատմություն).* Պատմեք Ալմա Կրտսերի պատմությունը և հրավիրեք երեխաներին ձեզ հետ կատարել պատմության գործողությունները: Սա տրվում է որպես օրինակ. «Ալմա Կրտսերը վատ ընտրություններ էր կատարում *(ընդունեք դեմքի դաժան արտահայտություն):* Նա և նրա ընկերները փորձում էին ոչնչացնել Եկեղեցին: Մի օր մի հրեշտակ եկավ, որպեսզի կանգնեցներ նրանց:

*Դերակատարությունը հնարավորություն է տալիս ներգրավվել բոլոր երեխաներին:*

Ալման վախեցավ *(ձևացրեք ձեզ վախեցած)*: Նա այնպես էր վախեցել, որ ընկել էր գետնին, կարծես, մահացած լիներ *(ձևացրեք ձեզ մահացած)*: Նա այնքան շատ զղջաց իր մեղքերի համար, որ երեք օր չէր կարողանում շարժվել *(անշարժ մնացեք)*: Ի վերջո, նա հիշեց, որ Հիսուս Քրիստոսը վճարել էր իր մեղքերի գինը, կամ՝ քավել իր մեղքերը: Երբ նա մտածեց այն մասին, թե ինչ էր արել Հիսուս Քրիստոսը, մեծ ուրախություն զգաց *(ուրախ ցատկեք)*: Ալման ապաշխարեց և դարձավ մեծ մարգարե, ով ուսուցանեց մարդկանց Հիսուս Քրիստոսի մասին» (տես Ալմա 36):

**Խրախուսեք կիրառել** *(քննարկելով)*. Համառոտ քննարկեք ապաշխարության հետևյալ սկզբունքները. (1) հասկացել եմ, որ սխալ եմ կատարել, (2) զղջում եմ մեղքի համար, (3) խոստովանում եմ Երկնային Հորը, (4) ուղղում եմ սխալը, և (5) չեմ անում ցանկանում դա կրկին կատարել:

**Հուշում.** *Հաշվի առեք ժամանակի սահմանափակումները, երբ ծրագրում եք ձեր միացյալ ժամը: Օրինակ, շաբաթ 3-ի վարժության համար խնդրեք հյուր-խոսնակին խոսել երկու րոպե: Կարող եք թվով ավելի քիչ խոսնակներ հրավիրել, որպեսզի յուրաքանչյուրն ավելի շատ ժամանակ ունենա խոսելու:*

## Շաբաթ 3. Հիսուս Քրիստոսը հարություն առավ, և ես նույնպես հարություն կառնեմ:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(երգ երգելով)*. Միասին երգեք «Ապրե՞ց կրկին Հիսուսը» (*ԵԵ,* 64) կամ «Հիսուսն հարյավ» (*ԵԵ,* 70): Երեխաներից մեկին խնդրեք բացատրել, թե ինչ է ուսուցանում երգը: Երեխաներին ասացեք՝ քանի որ Հիսուս Քրիստոսը հարություն առավ, մենք նույնպես հարություն կառնենք: Պահեք սուրբ գրքերը և բացատրեք, որ մենք գիտենք, որ Քրիստոսը հարություն առավ, որովհետև կարող ենք կարդալ այդ մասին սուրբ գրքերում: Բացատրեք, որ թեև մենք չենք տեսել հարություն առած Քրիստոսին, ուրիշները տեսել են և պատմել մեզ այն, ինչ իմացել են

**Օգնեք հասկանալ** *(լսելով հյուր-խոսնակներին)*. Ձեր ծխի մի քանի չափահաս անդամների խնդրեք գալ միացյալ ժամի և ներկայացնել հարություն առած Քրիստոսի հետևյալ վկաներից մեկին. Մարիամ Մագդաղենացուն (տես Հովհաննես.1–18), Թովմասին (տես Հովհաննես Ի.19–29), Նեփիացի տղամարդուն կամ կնոջը (տես 3 Նեփի 11.1–17, 17) և Զոզեֆ Սմիթին (տես Զոզեֆ Սմիթ - Պատմություն 1.11, 14–17, տես նաև ՎևՈ 76.22–24): Խնդրեք ծխի անդամներին կիսվել սուրբգրքյան պատմությունով և բերել իրենց վկայությունը Քրիստոսի հարության մասին:

## Շաբաթ 4. Ես կարող եմ հարգանք ցույց տալ Փրկչի հանդեպ՝ ակնածալից լինելով:

**Օգնեք հասկանալ** *(նայելով նկարները)*. Ցույց տվեք սուրբ վայրերի նկարներ, օրինակ՝ Գեթսեմանիի այգու, Հիսուսի գերեզմանի, Սուրբ Պուրակի, տաճարի և հավաքատան: Ցույց տալով յուրաքանչյուր նկարը, հարցրեք. «Ինչո՞ւ է այս վայրը սուրբ կամ հատուկ: Ինչպե՞ս դուք ձեզ կպահեիք, եթե այնտեղ լինեիք»: Քննարկեք, թե ինչ է ակնածանքը և թե ինչպես են ակնածալից գործերը դրսևորում մեր սերը և հարգանքը Փրկչի հանդեպ: Բացատրեք, որ երբ մենք ակնածալից ենք, մենք կարող ենք ավելի մոտ մեզ զգալ Իրեն:

**Խրախուսեք կիրառել** *(մտածելով օրինակների մասին)*. Գրեք «Ակնածալից» և «Ոչ-ակնածալից» բառերը գրատախտակին: Բաժանեք երեխաներին մի քանի խմբերի: Յուրաքանչյուր խմբի տվեք թղթի փոքր կտորներ և խնդրեք նրանց ամեն թղթի վրա գրել մի բան, որը ցույց է տալիս ակնածանք եկեղեցում , կամ մի բան, որը ցույց չի տալիս ակնածանք: Խնդրեք բոլոր խմբերին հերթով կարդալ իրենց գրածը: Խնդրեք երեխաներին ծալել իրենց ձեռքերը, եթե օրինակը ակնածալից է, կամ թափահարել իրենց մատները, եթե այն ակնածալից չէ: Ապա խմբի մի անդամի խնդրեք դնել թուղթը գրատախտակին գրված համապատասխան վերնագրի տակ:

**Խաղեր.** *Պատշաճ խաղերը Երեխաների Խմբում օգնում են պահպանել ակնածալից մթնոլորտը: Խաղերը բազմազանություն են հաղորդում դասերին և թույլ են տալիս երեխաներին շփվել միմյանց հետ: Դրանք նաև ամրացնում են զվարճալի եղանակով ուսուցանվող ավետարանի սկզբունքը:*

**Ապրիլ**

# Ընտանիքը ամենակարևոր դերն ունի Աստծո ծրագրում

**Երգ. «Ընտանիքն Աստծուց է»**
(այս ծրագրի 28–29 էջեր)

*«Տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից և . . . ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում Իր զավակների հավերժական ճակատագրի համար» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

**Հուշում.** *Երբ ուսուցանում եք ընտանիքների մասին, զգայուն եղեք ձեր Երեխաների Խմբի ընտանեկան իրավիճակների հանդեպ: Խրախուսեք բոլոր երեխաներին արժանիորեն ապրել և պատրաստվել, որ մի օր կարողանան ունենալ իրենց սեփական հավերժական ընտանիքները:*

## Շաբաթ 1. Ընտանիքը ամենակարևոր դերն ունի Աստծո ծրագրում

**Առանձնացրեք վարդապետությունը** *(գտնելով բացակայող բառերը).* Նախքան Երեխաների Խմբի ժամը փակցրեք «ընտանիք» և «ամենակարևոր» բառերը երկու աթոռների տա: Գրատախտակին գրեք հետևյալը. « _____ _____ դերն ունի Աստծո ծրագրում»: Խնդրեք երեխաներին նայել իրենց աթոռների տակ՝ բացակայող բառերը գտնելու համար: Հրավիրեք նրանց, ովքեր գտնում են բառերը, դնել դրանք գրատախտակին՝ ճիշտ բաց թողնված տեղերում: Խնդրեք բոլոր երեխաներին միասին արտասանել նախադասությունը:

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով ընտանիքները և երգ երգելով).* Բացատրեք, որ *կենտրոնական* նշանակում է «անհրաժեշտ մաս»: Խնդրեք երեխաներին ցույց տալ այնքան մատ, որքան ընտանիքի անդամ իրենք ունեն, և քննարկեն, թե ինչպես է յուրաքանչյուրն ընտանիքի անդամ հանդիսանում: Երգեք «Ընտանիքները հավերժ են» (ԵԵ, 188):

**Խրախուսեք կիրառել** *(նկարներ նկարելով).* Խնդրեք երեխաներին նկարել մի մեծ շրջան և դրա կենտրոնում նկարել իրենց ընտանիքին: Խրախուսեք երեխաներին տանել իրենց նկարները տուն և սովորեցնել իրենց ընտանիքներին, որ ընտանիքը ամենակարևոր դերն ունի Աստծո ծրագրում:

## Շաբաթ 2. Ծնողները կարևոր պարտականություններ ունեն ընտանիքում:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(երգելով).* Խնդրեք երեխաներին մտածել Երեխաների Խմբի իրենց սիրված երգի մասին: Նրանց ասացեք, որ երբ հաշվեք մինչև երեքը, նրանք պետք է բոլորը կանգնեն և միաժամանակ երգեն իրենց սիրված երգը: Հաշվեք մինչև երեքը և թող նրանք սկսեն երգել: Կանգնեցրեք երգը և խնդրեք երաժշտության ղեկավարին օգնել նրանց մեկ երգ երգել: Շեշտեք, որ առանց երաժշտության ղեկավարի ղեկավարության խառնաշփոթ է ստեղծվում: Բացատրեք, որ մենք նույնպես մեր տներում խառնաշփոթ կունենայինք, եթե Երկնային Հայրը չտար ծնողներին ընտանիքը ղեկավարելու կարևոր պարտականությունը:

*Երեխաներին տեսողական ներկայացումներում ներգրավվելն օգնում է գրավել նրանց ուշադրությունը և պատրաստել նրանց ուսուցանվելուն:*

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով ծնողների դերերը).* Երկու տղաների և երկու աղջիկների խնդրեք առաջ գալ: Յուրաքանչյուրին տվեք մի ցուցանակ, որը ներկայացնում է ընտանիքի որևէ անդամի (հայր, մայր, որդի և դուստր): Կանգնեք «հոր» կողքին և բացատրեք, որ հոր պարտականությունն է լինել իր ընտանիքի հայրապետը և նախագահել, ապահովել և պաշտպանել ընտանիքին: Խնդրեք երեխաներին բերել օրինակներ, թե ինչ պետք է անեն հայրերը՝ այս դերերը կատարելու համար, և խնդրեք «հորը» մնջախաղով ցույց տալ այն, ինչ նրանք նկարագրում են: Կանգնեք «մոր» կողքին և բացատրեք, որ մոր պարտականությունն է՝ խնամել և սնուցել ընտանիքին: Խնդրեք երեխաներին բերել օրինակներ, թե ինչ պետք է անեն մայրերը՝ այս դերերը կատարելու համար, և խնդրեք «մորը» մնջախաղով ցույց տալ այն, ինչ նրանք նկարագրում են: Ասացեք երեխաներին, որ երկու ծնողներն էլ ունեն լավ օրինակ լինելու և ավետարանն ուսուցանելու պարտականությունը: Յուրաքանչյուր դասարանին տվեք մի բան, որը ներկայացնում է, թե ինչպես ծնողները կարող են ուսուցանել իրենց ընտանիքներին (օրինակ՝ սուրբ գրություններ, ընտանեկան երեկոյի դասագիրք կամ նկարներ, որոնք պատկերում են միասին ճաշող, աղոթող և աշխատող ընտանիքի): Հրավիրեք մեկական երեխա յուրաքանչյուր դասարանից պատմել, թե ինչպես ծնողները կարող են օգտագործել տվյալ առարկան՝ իրենց ընտանիքին օգնելու համար

**Ցույց տվեք սեր.** *Որպեսզի ցույց տաք, որ սիրում եք նրանց, ում ուսուցանում եք, անկեղծորեն գովաբանեք երեխայի կատարած հատուկ արարքի համար: Օրինակ, ընդհանուր գովասանքի խոսքերի փոխարեն, ինչպիսիք են «շատ լավ էր» կամ «շնորհակալություն», դուք կարող եք ասել. «Շնորհակալություն ձեր ընտանիքի մասին պատմելու համար»:*

## Շաբաթ 3. Երեխաները իրենց ծնողներին հնազանդվելու պարտականություն ունեն:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(կարդալով սուրբ գրություն).* Դասից առաջ թաքցրեք թղթի մի կտոր, որի վրա գրված է Եփեսացիս 6.1: Խնդրեք երեխաներից մեկին կանգնել և ուղղորդեք նրան դեպի այդ թղթի կտորը: Օրինակ, կարող եք ասել. «Երեք մեծ քայլ կատարիր առաջ: Վեց քայլ՝ դեպի ձախ»: Երբ երեխան գտնի թուղթը, խնդրեք բոլոր երեխաներին գտնել սուրբ գրության այդ հատվածը իրենց սուրբ գրքերում և խնդրեք մեկին բարձաձայն այն կարդալ: Բացատրեք, որ «Տիրոջում» լինել նշանակում է անել ճիշտը

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով սուրբգրքյան պատմություն).* Պատմեք Լեքիի մասին պատմությունը, ով ուղարկում է իր որդիներին արույրե թիթեղների ետևից (տես 1 Նեփի 3–4): Կրկնեք պատմությունը, նմանատիպ հարցեր տալով. «Ովքե՞ր էին զավակները: Ո՞վ էր ծնողը: Ի՞նչ էր խնդրում ծնողը: Արդյո՞ք հեշտ էր հնազանդվել: Ի՞նչ տեղի ունեցավ, երբ զավակները հնազանդվեցին իրենց ծնողին»:

## Շաբաթ 4. Ես կարող եմ սեր ցուցաբերել իմ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանդեպ:

**Օգնեք հասկանալ** *(խաղալով գուշակող խաղ կամ երգելով երգ).* Հուշումներ տվեք ընտանիքի հետևյալ անդամների մասին և խնդրեք երեխաներին դիպչել իրենց քթին, երբ գուշակեն, թե ում եք դուք նկարագրում՝ հորը, մորը, եղբորը, քրոջը, տատիկին, պապիկին, հորաքրոջը, մորաքրոջը, հորեղբորը, մորեղբորը քեռուն, զարմիկին և այլն: Օրինակ, հորաքրոջ մասին հուշումը կարող է լինել հետևյալը. «Ես աղջիկ եմ: Ես մեծացել եմ ձեր հայրիկի հետ: Ես ձեր զարմուհու ոչ հարազատ քրոջ մայրն եմ»: Երբ երեխաները ճիշտ գուշակեն ընտանիքի անդամին, տվեք նրան այդ անդամին ներկայացնող ցուցանակը և հրավիրեք կանգնել դասարանի առաջ: Բացատրեք, որ ընտանիքներում կարող են լինել այդ բոլոր անդամները կամ ոչ բոլորը, բայց թեև բոլոր ընտանիքները տարբեր են, նրանք կիսում են մեկ ընդհանուր բան՝ սեր: Միասին երգեք «Երջանիկ ընտանիք» (*ԵԵ,* 198):

**Խրախուսեք կիրառել** *(քննարկելով ընտանիքները).* Մի երեխայի խնդրեք պահել տան մի նկար: Մի քանի երեխաների խնդրեք թվարկել ընտանիքի անդամներին, ովքեր ապրում են իրենց այդ տանը, և ասել, թե ինչպես են իրենց սերը ցույց տալիս նրանց հանդեպ: Երկրորդ երեխային խնդրեք կանգնել առաջինի կողքին և պահել տան մեկ այլ նկար: Հարցրեք. «Ո՞վ ունի ընտանիք, որն ապրում է հարևանությամբ: Ինչպե՞ս եք դուք ցույց տալիս, որ սիրում եք նրանց»: Վերջապես, երրորդ երեխային խնդրեք պահել մեկ այլ տան նկար և հեռու կնագնել առաջին երկուսից: Հարցերք. «Դուք ունե՞ք ընտանիքի անդամներ, ովքեր հեռու են ապրում»: Քննարկեք , թե ինչպես երեխաները կարող են սեր ցույց տալ ընտանիքի այդ անդամների հանդեպ: Խրախուսեք երեխաներին ընտրել եղանակ, որով կարող են սեր ցույց տալ իրենց ընտանիքի անդամների հանդեպ հաջորդ շաբաթվա ընթացքում:

**Մայիս**

# Ընտանիքներն օրհնվում են, երբ հետևում են մարգարեին

*«Հիշէք սուրբ մարգարէներից առաջուց ասուած խօսքերը եւ մեր՝ Տիրոջ եւ Փրկչի առաքեալներիս պատուիրանքները» (Բ Պետրոս Գ.2):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

**Երգ. Երգեք ձեր ընտրությամբ մի երգ *Երեխաների Երգարանից, Օրհներգերից* կամ Եկեղեցու ամսագրերից**

*Երեխաներին մասնակցել թույլատրելը հնարավորություն կտա նրանց ակտիվ դեր խաղալ ուսման ընթացքում:*

## Շաբաթ 1. Աստված խոսում է մեզ հետ մարգարեների միջոցով:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(շշնջալով ուղերձը).* Շշնջացեք «Աստված խոսում է մեզ հետ մարգարեների միջոցով» երեխաներից մեկի ականջին: Խնդրեք նրան շշնջալ դա մեկ այլ երեխայի ականջին և շարունակել մինչև բոլոր երեխաները լսեն ուղերձը: (Մեծ դասարաններում կարող եք դա անել փոքր խմբերով:) Խնդրեք վերջին երեխային կանգնել և կրկնել ուղերձը բարձրաձայն: Շեշտեք, որ ինչպես երեխաներն են փոխանցում ուղերձը մեկը մյուսին, Աստված խնդրում է մարգարեներին խոսել (կամ փոխանցել ուղերձը) Իր փոխարեն:

**Օգնեք հասկանալ** *(կարդալով սուրբ գրություններ և ուսուցանելով ուրիշներին).* Ցույց տվեք երեխաներին Նոյի նկարը: Բաժանեք երեխաներին չորս խմբերի: Յուրաքանչյուր խմբին տվեք հետևյալ սուրբ գրություններից մեկական հղում. Մովսես 8.20–26, Ծննդոց Զ.13–17, Ծննդոց Զ.18–22, Ծննդոց Է.7–12: Խնդրեք յուրաքանչյուր խմբի կարդալ իրենց հանձնարարված հատվածները

և հերթով պատմել մյուս երեխաներին իրենց սովորածի մասին: Հարցրեք երեխաներին, թե, իրենց կարծիքով, ինչ պատահեց մարդկանց, ովքեր հետևեցին Նոյի ուղերձին, և նրանց, ովքեր չհետևեցին (տես Ծննդոց Է.23): Վկայեք, որ Աստված խոսում է մեզ հետ մարգարեների միջոցով և, եթե մենք հետևենք նրանց, մենք ապահով կլինենք

## Շաբաթ 2. Սուրբ գրությունների մարգարեները օրինակ են իմ ընտանիքի համար:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(հետևելով օրինակին).* Ծափահարելով հնչեցրեք պարզ ռիթմ և խնդրեք երեխաներին կրկնել, հետևելով ձեր օրինակին: Քննարկեք, թե ինչ է օրինակը: Բացատրեք, որ մարգարեները սուրբ գրություններում օրինակներ են, որոնց մենք պետք է հետևենք:

**Օգնեք հասկանալ և կիրառել** *(կարդալով սուրբ գրություններ).* Բաժանեք երեխաներին խմբերի: Յուրաքանչյուր խմբի չափահասին տվեք հետևյալ բառաշերտերից մեկը և խնդրեք կարդալ իրենց բառաշերտերի վրա գրված սուրբ գրությունները իրենց խմբի երեխաների համար

Հովհաննես Մկրտիչը. ՎևՈ 84.27–28 (մկրտվեց)

Ալմա Կրտսերը. Մոսիա 27.23–24 (ապաշխարեց)

Յեսուն. Յեսու ԻԴ.15 (ծառայեց Տիրոջը)

Բենիամին թագավորը. Մոսիա 2.17–18 (ծառայեց ուրիշներին)

Լեքին. 1 Նեփի 1.5 (աղոթեց)

Նեփին. 1 Նեփի 3.7 (պահեց պատվիրանները)

Հարեդի եղբայրը. Եթեր 3.9 (հավատք ուներ)

Խնդրեք երեխաներին լսել, թե ինչ է արել մարգարեն, որի արդյունքում օրինակ է դարձել: Խնդրեք յուրաքանչյուր խմբի հորինել մի տուն իրենց մարգարեի համար՝ «Հետևիր մարգարեին» երգի մեղեդու տակ երգելու համար (*ԵԵ,* 110–11), և խնդրեք նրանց կիսվել իրենց հատվածով (հորինած տներով) մյուս երեխաների հետ

**Վարդապետության կրկնություն.** *Այս ամիս երեխաները կստանան սուրբգրքյան տարբեր ցուցադրումներ այն վարդապետության մասին, որ ընտանիքները օրհնվում են, երբ հետևում են մարգարեին: Կարող եք խնդրել երեխաներին ամեն շաբաթ կրկնել այդ վարդապետությունը:*

## Շաբաթ 3. Իմ ընտանիքը կօրհնվի, եթե մենք հետևենք մարգարեին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(հետևելով ցուցումներին).* Պատրաստեք բառաշերտ, որտեղ ասվում է «Իմ ընտանիքը կօրհնվի, եթե մենք հետևենք մարգարեին» և թաքցրեք այն սենյակում դասից առաջ: Երեխաներից մեկին խնդրեք հետևել ձեր ցուցումներին և գտնել բառաշերտը: Բացատրեք, որ ինչպես երեխան հետևեց ձեր ցուցումներին, մեր ընտանիքները կարող են հետևել մարգարեի ցուցումներին: Խնդրեք երեխաներին միասին կարդալ բառաշերտը:

**Օգնեք հասկանալ** *(լսելով խոսակցներին).* Նախապես խոսեք մի քանի ընտանիքների հետ և խնդրեք նրանց գալ Երեխաների Խումբ Միության ժամին և կիսվել նրանով, թե ինչպես է մարգարեին հնազանդվելն օրհնել իրենց ընտանիքին

**Խրախուսեք կիրառել** *(երգելով և քննարկելով).* Ցույց տվեք այսօրվա մարգարեի նկարը և բացատրեք, որ մենք այսօր ղեկավարվում ենք մարգարեի կողմից և կօրհնվենք, եթե լսենք և հետևենք նրան: Երգեք «Արագ կհնազանդվեմ» (*ԵԵ,* 197), դարձնելով առաջին տողը՝ «Երբ մարգարեն ինձ ասում է»: Գտեք, թե ինչ ուղղություն և խորհուրդ է տվել մարգարեն վերջին գերագույն համաժողովի ժամանակ: Խնդրեք մի քանի երեխաների կիսվել, թե ինչպես է հետևյալ խորհուրդն օրհնել իրենց ընտանիքներին:

## Շաբաթ 4. Մարգարեն խոսում է մեզ հետ գերագույն համաժողովին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(նայելով նկարները).* Խնդրեք երեխաներին կանգնել, եթե նրանք գիտեն, թե ով է ղեկավարում Եկեղեցին: Ցույց տվեք մարգարեի նկարը և հարցրեք երեխաներին նրա անունը: Բացատրեք, որ Աստված խոսում է մեզ հետ նրա միջոցով: Ցույց տվեք Համաժողովների Կենտրոնի նկարը: Ասացեք երեխաներին, որ գերագույն համաժողովի ժամանակ մարգարեն խոսում է մեզ հետ այդ շենքից

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով սուրբգրքյան պատմություն).* Ասացեք երեխաներին, որ Աստված միշտ խոսել է Իր ժողովրդի հետ մարգարեների միջոցով: Ցույց տվեք Բենիամին թագավորի նկարը և պատմեք Մոսիա 2.1–8-ի պատմությունը: Երեխաներին խնդրեք դերակատարությամբ կրկնել պատմությունը: Երեխաներին հիշեցրեք, որ Բենիամին թագավորը խոսեց աշտարակից և նրա քարոզը գրվեց, որպեսզի բոլորը կարողանային կարդալ այն: Խնդրեք երեխաներին համեմատել Բենիամին թագավորի պատմությունը նրա հետ, ինչ տեղի է ունենում այսօր գերագույն համաժողովին



*Հասարակ ցուցանակների կամ կոստյումների օգտագործումը կարող է հարստացնել Երեխաների Խմբի դասերը և գրավել երեխաների ուշադրությունը:*

**Ցույց տվեք սեր.** *«Եթե սիրենք նրանց, ում ուսուցանում ենք, նրանք դառնում են Հոգու հանդեպ ավելի ընկալունակ» (ՈՒՉԱՄԿ, 31): Դուք կարող եք երեխաների հանդեպ ձեր սերն ավելացնել, եթե աղոթեք նրանցից յուրաքանչյուրի համար, ծանոթանաք նրանց հետաքրքրություններին և մտահոգություններին, նրանց անունով դիմեք և ուշադիր լսեք նրանց:*

**Հունիս**

**Երգ. Երգ ձեր ընտրությամբ *Երեխաների Երգարանից, Օրհներգերից* կամ Եկեղեցու ամսագրերից**

# Քահանայության արարողությունները և տաճարային աշխատանքը օրհնում են իմ ընտանիքին:

*«Ինչ որ երկրի վերայ կապէք, երկնքումն էլ կապուած կ'լինի» (Մատթեոս ԺԸ.18):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. Քահանայության արարողությունները օրհնում և ամրացնում են իմ ընտանիքին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(երգ երգելով).* Խնդրեք երեխաներին լսել, թե ինչ բաներ են օրհնում իրենց ընտանիքը, մինչ միասին երգում եք «Սեր է հնչում այստեղ» երգի երկրորդ տունը (*ԵԵ,* 190–91): Բացատրեք, որ քահանայության արարողությունները կարող են օրհնել և ամրացնել բոլոր ընտանիքներին:

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով նկարները).* Երեխաներին բաժանեք խմբերի և յուրաքանչյուր խմբի տվեք քահանայության արարողություն պատկերող մի նկար: Խնդրեք յուրաքանչյուր խմբի մտածել հուշումների մասին, որոնք կօգնեն մյուսներին գուշակել, թե ինչ արարողություն է պատկերված իրենց նկարի վրա (օրինակ՝ «Այս արարողությունը տեղի է ունենում եկեղեցում ամեն կիրակի»): Հրավիրեք յուրաքանչյուր խմբի կիսվել իրենց հուշումներով, իսկ մյուս երեխաները թող գուշակեն, թե ինչ քահանայության օրհնություն են նրանք նկարագրում: Երբ նրանք ճիշտ գուշակեն, քննարկեք, թե ինչպես է այդ օրհնությունն օրհնել մեզ, և ցուցադրեք նկարը գրատախտակին:

**Խրախուսեք կիրառել** *(կիսվելով փորձառություններով).* Հրավիրեք երեխաներին խոսել տանը իրենց ընտանիքների հետ այն ժամանակների մասին, երբ քահանայության արարողությունները օրհնել և ամրացրել են իրենց կյանքը

**Ուսուցանեք մյուսներին.** *Երբ երեխաները կիսվում են Երեխաների Խմբում իրենց սովորածով, ամրապնդվում է վարդապետության իրենց ընկալումն ու վկայությունը: Այս ամիս նրանք խրախուսվում են կիսվել տանը իրենց սովորածով: Սա հնարավորություն կտա ավելի շատ քննարկում անցկացնել տանը և կամրապնդի ընտանիքը:*

## Շաբաթ 2. Տաճարները հնարավորություն են տալիս ընտանիքներին հավերժ միասին լինել:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(երգ երգելով).* Ցույց տվեք երեխաներին ձեր մոտակա տաճարի նկարը: Հրավիրեք երեխաներին երգել "Ուզում եմ տեսնել Տաճարը" երգի առաջին քառատողը (*ԵԵ,* 95): Շեշտեք «Կգնամ այնտեղ մի օր» արտահայտությունը և խնդրեք երեխաներին լսել, թե ինչու են Եկեղեցու անդամները տաճար գնում, մինչ միասին կերգեք երգի երկրորդ քառատողը: Քննարկեք նրանց պատասխանները և շեշտեք, որ տաճարային արարողությունները հնարավորություն են տալիս ընտանիքներին հավերժ միասին լինել:

*Երեխաներին թույլ տալը նկարել իրենց սովորածը ամրացնում է վարդապետության նրանց ըմբռնումը:*

**Խրախուսեք կիրառել** *(նկարելով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթի մի կտոր, որի վրա նկարած է տաճարի մի պարզ նկար (նմուշների համար տես sharingtime.lds.org): Խնդրեք երեխաներին նկարել տաճարի մոտ իրենց ընտանիքների անդամներին՝ ձեռք-ձեռքի բռնած: Խրախուսեք նրանց կիսվել իրենց նկարներով տանը՝ իրենց ընտանիքների հետ:

## Շաբաթ 3. Ես կարող եմ պատրաստվել հիմա՝ արժանի լինել տաճար մտնելու համար:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(երգ երգելով).* Խնդրեք երեխաներին լսել, թե որն է իրենց սուրբ պարտականությունը, մինչ նրանք երգում են «Ուզում եմ տեսնել տաճարը» երգի առաջին տունը (*ԵԵ, 95*): Երեխաներին ասացեք, որ նրանք կարող են պատրաստվել այժմ, որպեսզի տաճար մտնեն, երբ ավելի մեծ դառնան:



**Օգնեք հասկանալ** *(քննարկելով արժանավորությունը).* Ցույց տվեք մի տաճարի նկար: Բավատրեք, որ քանի որ տաճարը սուրբ վայր է, միայն նրանք, ովքեր արժանի են, կարող են մտնել տաճար: Ասացեք երեխաներին, որ ապրելով *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի չափանիշներով, կարելի է պատրաստվել արժանի լինել: Գրեք չափանիշներից մի քանիսը առանձին բառաշերտերի վրա: Երեխաներին բաժանեք խմբերի և տվեք յուրաքանչյուր խմբի մեկական բառաշերտ: Խնդրեք յուրաքանչյուր խմբի կանգնել և բացատրել, թե ինչու է այդ չափանիշով ապրելն օգնում իրենց պատրաստվել արժանի լինել տաճար մտնելու համար:

**Խրախուսեք կիրառել** *(խաղ խաղալով).* Թղթի առանձին կտորների վրա նկարեք բերան, աչքեր, ականջներ և ոտքեր (նկարների նմուշներ կարող եք գտնել sharingtime.lds.org կայքում): Մինչ դաշնակահարը նվագում է «Ուզում եմ տեսնել տաճարը» երգի մեղեդին, թող երեխաները իրար փոխանցեն նկարները: Երբ երաժշտությունը դադարի, խնդրեք նկարներ պահող երեխաներին ասել մի բան, որն իրենք կարող են անել մարմնի այդ մասի հետ, որպեսզի պատրաստվեն տաճար գնալուն (օրինակ՝ նրանք կարող են աղոթել, բարիությամբ խոսել և ասել ճշմարտությունն իրենց բերանով): Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

## Շաբաթ 4. Ընտանեկան պատմության աշխատանքը կապում է ինձ իմ նախնիների հետ:

**Օգնեք հասկանալ** *(երգ երգելով և լսելով պատմություն).* Պատմեք հետևյալ պատմությունը: Երբ ասեք «երգեք» կամ «երգել», թող բոլորը երգեն «Ընտանեկան պատմություն՝ ես անում եմ դա» (*ԵԵ, 94*): Սկսեք, երգելով միայն առաջին տողը, ապա ամեն անգամ ավելացրեք մեկ տող ևս: «Մի ընտանիք սիրում է երաժշտություն և երգ: Իրենց ընտանեկան պատմությունից նրանք իմացել են, որ իրենց նախնիները՝ Մերի Ջոնսը և նրա ծնողները, նույնպես երաժշտություն և երգել էին սիրում: Ջոնսերի ընտանիքը սիրում էր նաև Եկեղեցին: Նրանք մկրտվել էին Ուելս երկրում և որոշել էին տեղափոխվել Յուտա: Մերի երկու ծնողները մահացան այդ ճանապարհորդության ընթացքում, և թեև նա փոքր աղջնակ էր, Մերին շարունակեց քայլել դաշտերով, կրելով մի փայտե արկղ, որը լցված էր Եկեղեցու օրհներգերով, որոնք գրել էր իր հայրը: Հետագայում Մերին իր երեխաներին սովորեցրեց սիրել երգը: Այսօր նրա ծոռնուհու ծոռնուհին սիրում է երգել: Այդ երեխաները կապված են Մերիի հետ և գիտեն, որ նա փոխանցել է իրենց իր սերը Եկեղեցու և երգեցողության հանդեպ»:

**Խրախուսեք կիրառել** *(գունավորելով).* Յուրաքանչյուր երեխայի թղթի երկու կտոր տվեք, մեկը վերնագրված՝ «Ես», մյուսը՝ «Իմ նախնին»: Խնդրեք նրանց նկարել իրենց «Ես» վերնագրով թղթի վրա: Ապա խնդրեք նրանց տանը ծնողներին խնդրել պատմել իրենց նախնիներից մեկի մասին, որպեսզի կարողանան նկարել նրա նկարը մյուս թղթի վրա:

**Երգեր.** *Երբ նոր երգ եք երգում երեխաների հետ, երգեք մեկ տող երեխաների համար և խնդրեք նրանց կրկնել: Կրկնեք յուրաքանչյուր տողի համար*

**Հուլիս**

**Երգ. «Մկրտություն»**
(ԵԵ, 100–101)

# Մենք դառնում ենք Եկեղեցու անդամներ մկրտության և հաստատման միջոցով

*«Եթե մէկը ջրից եւ Հոգուց չծնուի, նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնը մտնել» (Հովհաննես Գ.5):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(նայելով նկար).* Ցույց տվեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի նկարը և խնդրեք երեխաներին պատմել, թե ինչ իրենք գիտեն նրա մասին: Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերականգնվել է Ջոզեֆ Սմիթի միջոցով:

*Եթե դուք չունեք շաբաթ 1-ում նկարագրված առարկայական դասի համար անհրաժեշտ նյութերը, մտածեք, թե ինչպես կարող եք օգտագործել ձեռքի տակ եղած նյութերը:*

**Օգնեք հասկանալ** *(առարկայական դաս անցկացնելով).* Բացատրեք, որ երբ Հիսուս Քրիստոսը երկրի վրա էր, Նա կազմակերպեց Իր Եկեղեցին քահանայության ղեկավարներով և ճիշտ վարդապետություններով: Խնդրեք երեխաներին թվարկել մի քանի ուսմունքներ և ղեկավար պաշտոններ Եկեղեցում, և ամեն մի պատասխանի հետ խնդրեք նրանց դնել խորհանարդը սեղանին՝ կառույց ստեղծելով: Երբ կառույցը պատրաստ լինի, բացատրեք, որ այն ներկայացնում է Հիսուս Քրիստոսի Եկեղեցին: Ցույց տվեք Քրիստոսի խաչելիության և հարության նկարները և բացատրեք, որ այդ իրադարձություններից հետո մարդիկ սկսեցին ուսուցանել սխալ բաներ: Քանդեք կառույցը՝ համառոտ բացատրելով Ուրացությունը: Քննարկեք Եկեղեցին վերակազմելու Ջոզեֆ Սմիթի հանձնարարականը և կրկնեք նույն ուսմունքները և ղեկավար պաշտոնները, որոնք նշեցին երեխաները, մինչ վերականգնում եք կառույցը: Բերեք վկայություն Ջոզեֆ Սմիթի միջոցով Եկեղեցու Վերականգնման մասին:

## Շաբաթ 2. Ես դառնում եմ Եկեղեցու անդամ մկրտության և հաստատման միջոցով:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(նայելով նկարները).* Պատկերացրեք, թե լրագրող եք: Երեխաներին ասացեք. «Բարի գալուստ Բարի Լուր ցանց: Այսօր ես մեծագույն լուր ունեմ հաղորդելու ձեզ՝ ձեզանից յուրաքանչյուրը կարող է դառնալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու անդամը: Դա ամենակարևոր բաներից մեկն է, որ դուք կարող եք անել կյանքում: Դուք դառնում եք Եկեղեցու անդամ մկրտության *(ցույց տվեք մկրտվող երեխայի նկար)* և հաստատման միջոցով *(ցույց տվեք մկրտվող երեխայի նկար)*»

**Օգնեք հասկանալ** *(կարդալով սուրբ գրություններ).* Բաժանեք երեխաներին խմբերի և տվեք յուրաքանչյուր խմբի հետևյալ հարցերից մեկը կամ մի քանիսը և համապատասխան սուրբ գրությունների հղումները: Հրավիրեք նրանց պատկերացնել, թե ինչ իրենք կասեին, եթե լրագրողը տար նրանց այդ հարցերը: Խնդրեք նրանց գտնել պատասխաններն իրենց սուրբ գրություններում

1. Ինչո՞ւ ես պետք է մկրտվեմ: (Տես Հովհաննես Գ.5, Գործք Բ.38:)
2. Ե՞րբ ես կարող եմ մկրտվել: (Տես ՎԱՌ 68.27:)
3. Ո՞վ կարող է ինձ մկրտել: (Տես ՎԱՌ 20.73:)
4. Ինչպե՞ս ես պետք է մկրտվեմ: (Տես ՎԱՌ 20.74:)
5. Ի՞նչ է մկրտությունը խորհրդանշում: (Տես Հռովմայեցիս Զ.3–5:)
6. Ինչպե՞ս եմ ես պատրաստվում մկրտությանը: (Տես Ալմա 7.15–16, 19.35:)

7. Ի՞նչ եմ ես խոստանում մկրտության ժամանակ: (Տես Մոսիա 18.10:)

8. Ի՞նչ եմ ես խոստանում ամեն կիրակի, երբ ընդունում եմ հաղորդությունը և թարմացնում իմ մկրտության ուխտերը (տես ՎևՈւ 20.77:)

**Խրախուսեք կիրառել** *(պատասխանելով հարցերի).* Պատկերացրեք, թե հարցազրույց եք անցկացնում երեխաների հետ: Նրանցից մի քանիսին խնդրեք հաղորդել, թե ինչ են սովորել Եկեղեցու անդամ դառնալու մասին

**Սուրբ գրություններ.** *Կարևոր է, որ երեխաները ավետարանի ճշմարտությունները սովորեն սուրբ գրքերից: Օգնեք երեխաներին կենտրոնանալ և լսել, երբ սուրբ գրություններն եք կարդում: Նույնիսկ փոքր երեխաները կարող են լսել հատուկ բառեր, երբ սուրբ գրության հատված եք կարդում:*

## Շաբաթ 3. Սուրբ Հոգին մխիթարում ու առաջնորդում է ինձ:

**Առանձնացրեք վարդապետությունը և օգնեք հասկանալ** *(լսելով վկայություններ).* Խնդրեք երեխաներին շշնջալ. «Սուրբ Հոգին մխիթարում և առաջնորդում է մեզ»: Խնդրեք ուսուցչին համառոտ կիսվել այն ժամանակներով, երբ Սուրբ Հոգին մխիթարել և առաջնորդել է իրեն:

**Խրախուսեք կիրառել** *(երգ երգելով).* Յուրաքանչյուր երեխայի տվեք թղթի մի կտոր և խնդրեք երեխաներին մի քանի խոսք գրել, որոնք իրենց միտքն են գալիս, երբ մտածում են այն մասին, թե ինչպես է Սուրբ Հոգին մխիթարում և առաջնորդում մեզ: Հրավիրեք երեխաներին լսել բառերը, որոնք գրել են, մինչ երգում են այս երգերից մեկը կամ երկուսը. «Սուրբ Հոգին» (*ԵԵ,* 105) և «Թող Հոգին առաջնորդի» (*Hymns,* no. 143): Խնդրեք նրանց շրջանակել բառերը, երբ երգում են դրանք: Խնդրեք երեխաներին կիսվել այն բառերով, որոնք շրջանակել են, և քննարկեք, թե ինչ է նշանակում յուրաքանչյուր բառը: Մի քանի երեխաների խնդրեք պատմել այն ժամանակների մասին, երբ Սուրբ Հոգին իրենց մխիթարություն կամ առաջնորդություն է տվել:

## Շաբաթ 4. Ես կարող եմ իմանալ ճշմարտությունը Սուրբ Հոգու զորությամբ:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(առանձնացնելով ճիշտը սխալից).* Թղթի տարբեր կտորների վրա գրեք նախադասություններ, որոնք հստակ ճիշտ են, և որոնք ակնհայտ սխալ են (օրինակ՝ «Արևը ջերմ է», «Մառույցը տաք է», «Աստղերը շողում են գիշերը», «Կրակը սառն է»): Երեխաներից մեկին խնդրեք ընտրել մեկը և բարձրաձայն կարդալ, իսկ մնացած երեխաներին խնդրեք կանգնել, եթե նախադասությունը ճիշտ է, և նստել, եթե այն սխալ է: Հարցրեք. «Ինչպե՞ս գիտեք»: Կրկնեք յուրաքանչյուր թղթի համար: Բացատրեք, որ մեկ այլ ձև, որով մենք կարող ենք իմանալ, թե արդյոք ինչ-որ բան ճիշտ է, դա Սուրբ Հոգու զորությամբ է: Կարդացեք Մորոնի 10.5:

**Օգնեք հասկանալ** *(կարդալով սուրբ գրություններ).* Բացատրեք, որ Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք իմանալ ճշմարտությունը, մենք կարող ենք լսել Հոգու ձայնը կամ զգալ, թե ինչպես է Նա խոսում մեր մտքում կամ սրտում: Ցույց տվեք գլխի (միտք), սրտի և ականջի նկարներ (պարզ նկարներ կարելի է գտնել sharingtime.lds.org կայքում): Երեխաներին բաժանեք չորս խմբերի և հրավիրեք յուրաքանչյուր խմբի խմբով բարձրաձայն կարդալ հետևյալ սուրբ գրությունները (տես «Choral Readings», *ՈՒՉԱՄԿ,* 163). ՎևՈւ 11.13, Հելաման 5.45, ՎևՈւ 8.2, Հելաման 5.46–47: Մինչ յուրաքանչյուր խումբ կարդում է իր սուրբ գրությունները, խնդրեք բոլորին ցույց տալ, թե որ նկարն է համապատասխանում այդ սուրբ գրության հատվածին, դնելով ձեռքերը իրենց գլխին, սրտին կամ ականջներին

*Օգնեք երեխաներին հասկանալ, որ խաղաղության և սիրո զգացումը, որը նրանք ունենում են, երբ սովորում են ավետարանի մասին, գալիս է Սուրբ Հոգուց: Հավաստիացեք, որ դրան տրամադրող ակնածալից միջավայր եք ստեղծում:*

**Երաժշտություն.** *Երեխաների Խմբի երգերը ընդգրկեք ձեր ուսուցման մեջ: Դա կօգնի երեխաներին հիշել իրենց սովորածը: «Մենք կարող ենք երգի միջոցով զգալ և շատ արագ սովորել . . . որոշ հոգևոր բաներ, որոնք այլապես մենք շատ դանդաղ կսովորեինք» (Բոյդ Ք. Փաքեր, ՈՒՉԱՄԿ, 46):*

**Օգոստոս**

# Առողջ միջոցառումներին մասնակցելը կամրացնի իմ ընտանիքը

**Երգ. «Վաղ փնտրեք Տիրոջը»**
*ԵԵ,* 108):

*«Հաջողակ . . . ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

**Սուրբ գրություններ մտապահելը** *կարող է օգնել երեխաներին ավետարանի վարդապետություններ սովորելիս: Հոգին կօգնի երեխաներին հիշել այդ խոսքերը իրենց կյանքի ընթացքում կարիքի պահին:*

*«Ընտանեկան երեկոն»*

**ԱՄՐԱՑՆՈՒՄ Է ԻՄ**

*«ամրացնում է իմ»*

*«ընտանիքը»:*

## Շաբաթ 1: «Աղոթեք Հորը ձեր ընտանիքներում . . . որպեսզի ձեր [ընտանիքները] կարողանան օրհնվել» (3 Նեփի 18.21):

**Առանձնացրեք վարդապետությունը** *(նայելով նկարները և արտասանելով սուրբ գրություն).* Ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը և ասացեք երեխաներին, որ Նա ուսուցանել է. «Աղոթեք Հորը ձեր ընտանիքներում . . . որպեսզի ձեր [ընտանիքները] կարողանան օրհնվել» (3 Նեփի 18.21): Կրկնեք այս սուրբ գրությունը երեխաների հետ մի քանի անգամ: Ցույց տվեք աղոթող ընտանիքի նկար և քննարկեք նկարը երեխաների հետ: Բացատրեք, որ ընտանեկան աղոթքում մենք շնորհակալություն ենք հայտնում Երկնային Հորը մեր օրհնությունների համար և խնդրում ենք օգնել և օրհնել մեր ընտանիքներին:

**Օգնեք հասկանալ և խրախուսեք կիրառել** *(երգելով և կիսվելով մտքերով).* Խնդրեք երեխաներին կազմել մեկ կամ մի քանի շրջան: Երգեք «Ընտանեկան աղոթք» երգը (*ԵԵ,* 189): Յուրաքանչյուր երեխայի խնդրեք ասել մի բան, որի համար շնորհակալ է Երկնային Հորը, կամ խնդրել որևէ բան ընտանեկան աղոթքում, ապա բռնել շրջանում գտնվող մյուս երեխայի ձեռքը: Երբ բոլոր երեխաները բռնած լինեն իրենց ձեռքերը, շեշտեք, թե ինչպես են ընտանիքները մնում միասին, օրհնվում և ամրացվում ընտանեկան աղոթքի միջոցով:

*Երեխաների Խմբում շարժումը երեխաներին միշտ ներգրավված և ուշադիր է պահում: Հարմարեցրեք վարժությունները ձեր Երեխաների Խմբի կարիքներին:*

## Շաբաթ 2. Ընտանեկան երեկոն ամրացնում է իմ ընտանիքը:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(կրկնելով վարդապետությունը).* Բաժանեք Երեխաների Միությունը երեք խմբերի: Հրավիրեք մի երեխայի յուրաքանչյուր խմբից պահել հետևյալ ցուցանակներից մեկը և խնդրեք այդ խմբի երեխաներին կանգնել և միասին կրկնել դրան վերաբերող արտահայտությունը.

Խնդրեք երեխաներին փոխանակել ցուցանակները և կրկնեք վարժությունը մինչև բոլոր խմբերը ասեն յուրաքանչյուր արտահայտությունը:

**Օգնեք հասկանալ** *(պատկերացնելով ամուր ընտանիքներ).* Ցույց տվեք Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի նկարը և բացատրեք, որ 1915թ. Նա սկիզբ դրեց ընտանեկան երեկոներին և խոստացավ «մեծ օրհնություններ՝ կանոնավոր ընտանեկան երեկոներ անցկացնելու համար: Ցույց տվեք ներկա մարգարեի նկարը և բացատրեք, որ մոտ 100 տարի անց մեր մարգարեն դեռ վկայում է, որ ընտանեկան երեկոն ամրացնում է ընտանիքները: Հրավիրեք մի քանի երեխայի ներկայացնել ընտանիքի անդամներին և խնդրեք նրանց կանգնել՝ բռնելով իրար ձեռքերը: Մեկ այլ երեխայի խնդրեք քաշել մեկ երեխային այդ շրջանից դուրս: Բացատրեք, որ ընտանիքներն ավելի ամուր են, երբ անց են կացնում ընտանեկան երեկո:

**Օգնեք հասկանալ և խրախուսեք կիրառել** *(ընտանեկան երեկոյի դերակատարում).* Մի քանի երեխաների խնդրեք կիսվել նրանով, թե ինչ իրենք կցանկանային անել իրենց ընտանեկան երեկոյին: Գրեք նրանց մտքերը գրատախտակին: Խրախուսեք երեխաներին օգնել ծրագրել և ներդրում կատարել իրենց ընտանեկան երեկոներին

## Շաբաթ 3. Սուրբ գրությունների ուսումնասիրությունը ինձ և իմ ընտանիքին հոգևոր ուժ է տալիս:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(պատասխանելով հարցերին).* Խնդրեք երեխաներին լարել իրենց բազուկների մկանները և ցույց տալ իրենց ֆիզիկական ուժը: Հարցրեք, թե ինչ իրենք կարող են անել, որպեսզի ֆիզիկապես ուժեղ դառնան: Ցույց տվեք սուրբ գրքերը և բացատրեք, որ մեր հոգիները կարող են ավելի ուժեղ դառնալ, եթե մենք կարդանք սուրբ գրությունները: Խնդրեք երեխաներին ասել «սուրբ գրությունների ուսումնասիրություն» ամեն անգամ, երբ դուք բարձրացնեք սուրբ գրությունները: Տվեք մի քանի հարց, որոնց կարելի է պատասխանել այս արտահայտությամբ. «Ի՞նչը ինձ կարող է օգնել լավ մտքեր ունենալ» և «Ինչպե՞ս ես կարող եմ ճիշտը գործելու ուժ ստանալ»: Բարձրացրեք ձեր սուրբ գրությունները յուրաքանչյուր հարցից հետո, որպեսզի երեխաները պատասխանեն: (Եթե երեխաները բերում են իրենց սուրբ գրությունները դասի, խնդրեք նրանց բարձրացնել իրենց սեփական սուրբ գրությունները, երբ կրկնում են «սուրբ գրությունների ուսումնասիրություն՝ ձեր հարցերին պատասխանելիս:)

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով սուրբգրքյան պատմություն).* Պատրաստեք երեք նկար գրատախտակին, որոնք ներկայացնում են եղանակները, որոնցով Հիսուս Քրիստոսը փորձվեց Մատթեոս Դ.1–11: Յուրաքանչյուր նկարի տակ գրեք համապատասխան սուրբ գրության հղումը (Մատթեոս Դ.4, Մատթեոս Դ.7 և Մատթեոս Դ.10): Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսը օգտագործում էր սուրբ գրությունները, երբ փորձվում էր: Բարձրաձայն կարդացեք Մատթեոս Դ.1–11, կանգ առնելով յուրաքանչյուր փորձությունից հետո՝ պարզաբանում տալու և հարցնելու համար. «Ի՞նչը Հիսուսին հոգևոր ուժ տվեց»: Բարձրացրեք ձեր սուրբ գրությունները, օգնելու համար երեխաներին պատասխանել, և խնդրեք երեխաներից մեկին կարդալ Հիսուս Քրիստոսի պատասխանը սուրբ գրքերից: Բացատրեք, որ «գրված է» նշանակում է, որ Հիսուսը մեջբերում է սուրբ գրքերից

**Խրախուսեք կիրառել** *(մտապահելով սուրբ գրության հատված).* Խնդրեք յուրաքանչյուր դասարանի ընտրել և հիշել սուրբ գրքություններից մի կարճ նախադասություն, որը կարող է նրան և նրանց ընտանիքներին հոգևոր ուժ տալ (օրինակ՝ Ղուկաս Ա.37, 1 Նեփի 3.7, կամ ՎԱՌ 10.5):

## Շաբաթ 4. Հանգստության օրը հանգստանալու և երկրպագելու օր է:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(դասավորելով բառերը).* Յուրաքանչյուր դասարանին տվեք մի ծրար, որը պարունակում է թղթի ինը կտորներ հետևյալ բառերից մեկով յուրաքանչյուրի վրա. *Հանգստության օրը հանգստանալու և երկրպագելու օր է:* Խնդրեք նրանց դնել բառերը ճիշտ հերթականությամբ: Քննարկեք «հանգստանալ» և «երկրպագել» բառերի իմաստը: Միասին կրկնեք արտահայտությունը:

Հանգստության | օրը | հանգստանալը | և | երկրպագելու | օր | է:

**Օգնեք հասկանալ** *(քննարկելով սուրբ գրություններ).* Գրատախտակին գրեք հետևյալ սուրբ գրությունների հղումները. Ելից Ի.8–11, Ղուկաս ԻԳ.56, Մոսիա 18.23, Վարդապետություն և Ուխտեր 68.29: Բացատրեք, որ Երկնային Հայրը ստեղծել է աշխարհը վեց օրում *(բարձրացրեք և շարժեք վեց մատները),* բայց յոթերորդ օրը Նա հանգստացավ *(բարձրացրեք յոթ մատները և անշարժ պահեք),* և բոլոր ժամանակներում Նա պատվիրում էր Իր զավակներին հանգստանալ յոթերորդ օրը՝ Հանգստության օրը, և պահել այն սուրբ: Չորս երեխաների հրավիրեք կարդալ գրատախտակին գրված սուրբ գրությունները: Երեխաներին խնդրեք լսել և պարզել, թե որ սկզբունքն է ուսուցանվում: Նշեք, որ սուրբ գրությունները գրվել են պատմության տարբեր ժամանակներում, սակայն բոլորն ուսուցանում են նույն սկզբունքը: Բացատրեք, որ Հանգստության օրը սուրբ պահելը նշանակում է անել բաներ, որոնք մեզ կմոտեցնեն Երկնային Հորը:

**Խրախուսեք կիրառել** *(խաղ խաղալով).* Խնդրեք երեխաներին հաշվել շաբաթվա օրերը, սկսած երկուշաբթի օրից: Խնդրեք երեխային, ով ասում է «Կիրակի», առաջարկել Հանգստության օրվա համար պատշաճ անելիք: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

**Սուրբ գրություններ.** *Որոշ երեխաներ, հնարավոր է, չունենան սուրբ գրություններ: Որոշ երեխաներ, հնարավոր է, դեռևս չկարողանան կարդալ: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք ընդգրկել բոլոր երեխաներին սուրբ գրությունների ուսումնասիրության ընթացքի մեջ: Օրինակ, կարող եք գրել սուրբ գրության հատվածը գրատախտակին և կարդալ այն միասին, կամ խնդրեք փոքր խմբի օգտվել սուրբ գրքերի մեկ հավաքածից:*

**Սեպտեմբեր**

# Ավետարանով ապրելը օրհնում է ին ընտանիքին

*«Մենք հավատում ենք ազնիվ, ճշմարիտ, մաքրաբարո, բարյացակամ, առաքինի լինելուն և բոլոր մարդկանց բարիք անելուն: Իրավ, կարող ենք ասել, որ մենք հետևում ենք Պողոս Առաքյալի հորդորանքին. Ամեն բանի հավատում ենք, ամեն բանի համար հույս ունենք, համբերել ենք շատ բաների և հույս ունենք, որ կկարողանանք համբերել բոլոր բաներին: Եթե մի բան առաքինի է, գեղեցիկ, բարեհամբավ, գովեստի արժանի, մենք ձգտում ենք այդ ամենին» (Հավատո հանգանակ 1.13):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

**Բազմազանություն.** *Օգտագործեք բազմազանություն, երբ կրկնում եք սուրբ գրությունները կամ արտահայտությունները երեխաների հետ միասին: Օրինակ, կարող եք խնդրել տղաներին և աղջիկներին կրկնել արտահայտությունը առանձին-առանձին, կամ օգտագործել բարձր և ցածր ձայներ:*

## Շաբաթ 1. Ես ցույց եմ տալիս իմ երախտագիտությունը, շնորհակալություն հայտնելով իմ բոլոր օրհնությունների համար:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(լսելով պատմություն և կարդալով սուրբ գրություն).* Համառոտ պատմեք տաս բորոտների պատմությունը (տես Ղուկաս ԺԷ.11–19): Հարցրեք երեխաներին, թե ով այդ պատմության մեջ երախտագիտություն ցուցաբերեց: Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 59.7 և հարցրեք երեխաներին, թե ում պետք է երախտագիտություն ցուցաբերենք և թե ինչի համար մենք պետք է շնորհակալ լինենք Նրան:

**Օգնեք հասկանալ և կիրառել** *(խաղ խաղալով).* Ցուցադրեք օրհնություններ պատկերող նկարներ, օրինակ՝ ընտանիքի, ընկերների, ուտելիքի, տան, երկրի, կենդանիների և տաճարների նկարներ: Խնդրեք երեխաներին փակել իրենց աչքերը և երգել «Շնորհակալություն մեր Հորը» (*ԵԵ,* 20), մինչ դուք կհանեք նկարներից մեկը: Երբ նրանք ավարտեն երգը, խնդրեք նրանց բացել իրենց աչքերը և տեսնել, թե որ նկարն է բացակայում: Նետեք փափուկ պարկը երեխային և խնդրեք նրան կիսվել, թե ինչպես կարող է երախտագիտություն ցույց տալ այդ օրհնության համար: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

## Շաբաթ 2. Ծառայելով ուրիշներին, ես ծառայում եմ Աստծուն:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(կարդալով սուրբ գրություն).* Գրատախտակին գրեք հետևյալ արտահայտությունը. _____ ուրիշներին, ես _____ եմ Աստծուն: Կարդացեք միասին Մոսիա 2.17 և հարցրեք երեխաներն, թե ինչ բառ պետք է լինի բացթողնված տեղում (ծառայություն): Հրավիրեք երեխաներին կրկնել արտահայտությունը միասին:

**Օգնեք հասկանալ** *(լսելով պատմություն).* Կիսվեք հետևյալ պատմությունով. «Նախագահ Հեբեր Ջ. Գրանտի հայրը մահացավ, երբ նա միայն ինն օրեկան էր: Նրա մայրը շատ աղքատ էր և փող էր վաստակում, կար անելով ուրիշ մարդկանց համար: Երբեմն նա կարում էր ժամեր շարունակ, առանց հանգստանալու, այնպես, որ հազիվ էր սեղմում իր կարի մեքենայի ոտնակը: Հեբերը հաճախ մտնում էր կարի մեքենայի տակ և սեղմում ոտնակը մոր փոխարեն: Ձմեռները շատ ցուրտ էին, իսկ Հեբերն ուներ միայն մեկ բարակ մաշված վերարկու՝ որով կարող էր պաշտպանվել ցրտից: Նա երազում էր տաք վերարկու ունենալ, բայց գիտեր, որ նրանք հազիվ սննդի փող ունեին: Նա երջանիկ էր, երբ իր ծննդյան օրը մայրը նրան նվիրեց իր կարած տաք վերարկուն: Դա նրա ամենաթանկ ունեցվածքն էր: Մի քանի շաբաթ անց նա տեսավ, ինչպես մի տղա դողում էր ցրտից և հիշեց, թե ինչպես էր ինքը զգում: Նա հանեց իր նոր վերարկուն և տվեց այն տղային»: Դուք կարող եք նաև ցուցադրել

*Կարող եք խնդրել երեխաներին օգնել ցույց տալ պատմությունները, որոնք պատմում եք Երեխաների Միությունում:*

«Վերարկուն» տեսաֆիլմը, որը մատչելի է www.mormonchannel.org/the-coat կայքում: Քննարկեք, թե ինչպես Հեբերը ծառայեց մյուսներին և խնդրեք մի քանի երեխաների և ուսուցիչների կիսվել իրենց փորձառություններով՝ կապված ծառայության հետ: Ասացեք, որ երբ մենք ծառայում ենք մյուսներին, մենք ծառայում ենք Աստծուն: (Տես *ՈՒՉԱՄԿ,* 68–70՝ հարցեր տալու և լավ քննարկումներ ծավալելու մտքերի համար:)

## Շաբաթ 3. Մենք հավատում ենք ազնիվ լինելուն:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(լսելով պատմություն և արտասանելով անգիր սուրբ գրություն).* Պատմեք մի երեխայի մասին, որը մեկ ուրիշ երեխայի պատմում է իր ձկնորսության մասին և մեծապես չափազանցնում իր բռնած ձկան չափերը: Հարցրեք երեխաներին, թե ինչ սխալ է կատարել երեխան, և ինչ նա պետք է կատարեր: Խնդրեք երեխաներին խորհել Հավատո Հանգանակներից մեկի շուրջ, որը կարող է օգնել իրենց հիշել, որ միշտ պետք է ասել ճշմարտությունը: Կրկնեք միասին հավատո տասներեքերորդ նագանակի սկիզբը («Մենք հավատում ենք ազնիվ լինելուն»):

**Խրախուսեք կիրառել** *(արձագանքելով իրավիճակների).* Ներկայացրեք մի իրավիճակ, որում երեխաները կարող են գայթակղվել անազնիվ վարվել, օրինակ, երբ ծնողը հարցնում է, թե ով է թողել խաղալիքները հատակին: Հրավիրեք երեխաներին կանգնել, երբ նրանք գիտեն, թե ինչ կարող են անել ազնիվ լինելու համար: Խնդրեք մի քանի երեխաների կիսվել իրենց պատասխաններով: Կրկնեք այլ իրավիճակների համար, եթե ժամանակը թույլ է տալիս: Խրախուսեք երեխաներին մտածել. «Մենք հավատում ենք ազնիվ լինելուն», երբ գայթակղվում են անել հակառակը:

**Պատմություններ.** *Պատմություններ պատմելը գրավում է երեխաների ուշադրությունը և օգնում նրանց հիշել ավետարանի սկզբունքները: Պատմությունները սովորեք այնքան լավ, որպեսզի ձեր սեփական խոսքերով՝ արտահայտիչ և ոգևորված պատմեք դրանք:*

## Շաբաթ 4. Ապրելով ավետարանով, ես լավ օրինակ եմ Ծառայում ուրիշներին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(դերակատարելով պատմություն).* Պատմեք հետևյալ պատմությունը և հրավիրեք երեխաներին դերակատարել այն ձեզ հետ միասին. «Դուք արշավում եք սարերում ձեր ընտանիքի հետ, երբ վրա է հասնում ուժեղ փոթորիկ *(դողացեք):* Դուք չեք տեսնում դեպի ճամբար տանող ճանապարհը *(պահեք ձեռքերը աչքերի վրա, փնտրեք հայացքով):* Հետո գալիս է ձեր հայրը՝ հագին մեծ, ծանր կոշիկներ *(տեղում քայլեք):* Նա ասաց. «Ես գիտեմ ճանապարհը: Հետևեք ինձ»: Հայրը մեծ ոտնահետքեր թողեց ձյան մեջ, որպեսզի դուք հետևեք դրանցով»: Բացատրեք, որ ինչպես մենք կարող ենք հետևել հոր ոտնահետքերով, մյուսները կարող են տեսնել մեր լավ օրինակը և հետևել դրան, եթե մենք ապրենք ավետարանով:

Խնդրեք երեխաներին կրկնել ձեզանից հետո. «Ապրելով ավետարանով ես լավ օրինակ եմ ծառայում ուրիշներին»:

**Օգնեք հասկանալ և կիրառել** *(կարդալով սուրբ գրություն և քննարկելով չափանիշները).* Խնդրեք երեխաներին կարդալ Ա Տիմոթեոս Դ.12: Գրի առեք թղթի տարբեր կտորների վրա արտահայտություններ *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկից, որոնք պատշաճ եք համարում երեխաների համար, և դրեք դրանք մի տուփի մեջ: Հրավիրեք մի երեխայի հանել մեկ արտահայտություն և կիսվել այդ չափանիշի հետ կապված իր անձնական փորձառությամբ կամ պատմել, թե ինչպես է այդ չափանիշով ապրելը լավ օրինակ հանդիսանում մյուսների համար: Կրկնեք նույնը մյուս արտահայտությունների համար: Երգեք «Ես ուզում եմ ապրել ավետարանով» երգը (*ԵԵ,* 148):



# «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» ուղերձը եկել է Աստծուց իմ ընտանիքին օգնելու համար

*«Բաներդ խօսեցի ձեզ հետ, որ իմ ուրախութիւնը ձեզանում մնայ, եւ ձեր ուրախութիւնը լցուած լինի» (Հովհաննես ԺԵ.11):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» ուղերձը եկել է Աստծուց իմ ընտանիքին օգնելու համար:

**Առանձնացրեք վարդապետությունը.** Ցույց տվեք երեխաներին Տաս Պատվիրանները և սուրբ գրությունները պատկերող նկարներ: Հարցրեք. «Որտեղի՞ց են դրանք գալիս»: Բացատրեք, որ դրանք Աստծուց են տրված Իր մարգարեների միջոցով՝ օգնելու համար մեզ իմանալ, թե ինչ անել: Ցույց տվեք երեխաներին «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթուղթը և բացատրեք, որ այն տրվել է Աստծուց Իր վերջին օրերի մարգարեների միջոցով՝ մեր ընտանիքներին օգնելու համար:

**Օգնեք հասկանալ** *(երգեր երգելով).* Բացատրեք, որ ոչ բոլոր ընտանիքներն են նման, սակայն յուրաքանչյուր ընտանիք կարևոր է: Աստված ցանկանում է, որ բոլոր ընտանիքները երջանիկ լինեն և վերադառնան Նրա մոտ: Յուրաքանչյուր դասարանին տվեք մեկական բառաշերտ՝ ընտանիքի հայտարարությունից տարբեր նախադասություններով: Խնդրեք երեխաներին մտածել, թե որ երգն է վերաբերում իրենց նախադասությանը: Հրավիրեք դասարաններին հերթով բարձրաձայն կարդալ իրենց բառաշերտերը և առաջնորդել մյուս երեխաներին՝ երգել իրենց ընտրած երգը: Վկայեք, որ մեր ընտանիքները կօրհնվեն, եթե մենք հետևենք ընտանիքի հայտարարության մեջ տրված ուսմունքներին:

## Շաբաթ 2. Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը էական դեր է կատարում Աստծո Ծրագրում:

**Օգնեք հասկանալ** *(լսելով և պատմելով պատմություն).* Պատմեք Ադամի մասին, ով առաջին մարդն էր Երկրի վրա: Խնդրեք մի երեխայի կարդալ Ծննդոց Բ.18 և թող երեխաները լսեն, թե ինչ է ասել Երկնային Հայրը («Լաւ չէ որ մարդը մինակ լինի»): Բացատրեք, որ Նա ստեղծեց Եվային, ով պետք է ամուսնանար Ադամի հետ: Մի երեխայի խնդրեք կարդալ Ծննդոց Գ.20 և թող երեխաները լսեն, թե ինչպես Ադամն անվանեց իր կնոջը (Եվա): Այնուհետև խնդրեք մի երեխայի կարդալ Ծննդոց Ա.28 և երեխաները թող լսեն, թե ինչ Երկնային Հայրը պատվիրեց Ադամին և Եվային անել («բազմանալ», կամ ընտանիք ունենալ): Բացատրեք, որ առանց Ադամի և Եվայի ամուսնության, Աստծո ծրագիրն Իր զավակների համար, որով նրանք պետք է գային Երկիր, չէր իրականանա: Հրավիրեք մի քանի երեխայի վերապատմել պատմությունը:

**Խրախուսեք կիրառել** *(նայելով նկարներ).* Բացատրեք, որ Երկնային Հոր պատվիրանը, ըստ որի տղամարդը և կինը պետք է ամուսնանան և ընտանիք ունենան, միանգամայն կարևոր է այսօր, ինչպես եղել է Ադամի և Եվայի ժամանակ: Ցույց տվեք ընտանիքների նկարներ և խնդրեք երեխաներին ցույց տալ տղամարդուն, կնոջը և երեխաներին:

## Շաբաթ 3. Երբ ընտանիքի կյանքը հիմնվում է Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա, մենք կարող ենք երջանիկ լինել:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(տեսնել նկարներ).* Հրավիրեք մի երեխայի պահել մի ընտանիքի նկար: Հարցրեք, թե ինչի վրա մենք պետք է հիմնենք մեր ընտանեկան կյանքը, որպեսզի երջանիկ լինենք: Խնդրեք մեկ այլ երեխայի պահել Հիսուս Քրիստոսի նկարը: Բացատրեք, որ երբ ընտանեկան կյանքը հիմնվում է Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա, մենք կարող ենք երջանիկ լինել:

**Օգնեք հասկանալ և կիրառել** *(կազմելով ցուցակներ).* Ցույց տվեք Հիսուս Քրիստոսի նկարը գրատախտակին և գրեք դրա տակ.

«Հիսուսի ուսմունքները»: Երեխաներին բաժանեք երեք խմբերի: Յուրաքանչյուր խմբի տվեք հետևյալ բառաշերտերից մեկը և սուրբգրքյան հղումները. «Հետևիր պատվիրաններին» (Հովհաննես ԺԴ.15), «Օգնիր ուրիշներին» (Մոսիա 2.17), և «Սիրեք բոլորին» (Հովհաննես ԺԳ.34): Խնդրեք երեխաներին կարդալ իրենց հանձնարարված սուրբ գրությունները և քննարկել իրենց խմբերում, թե ինչպես կարող են հետևել Հիսուսի այդ ուսմունքին իրենց ընտանիքներում: Հրավիրեք յուրաքանչյուր խմբի դնել իր բառաշերտը գրատախտակին և պատմել մյուս երեխաներին, թե ինչ են քննարկել: Երբ բոլոր խմբերը կկիսվեն իրենց մտքերով, քննարկեք, թե ինչպես կարող է Հիսուսի հետևյալ ուսմունքը օգնել մեր ընտանիքներին երջանիկ լինել:

**Պատմություններ վերապատմելը.** *Երբ երեխաները վերապատմում են պատմությունը, որը նոր են լսել, նրանք ավելի լավ են այն հիշում:*

## Շաբաթ 4. Հաջողակ ընտանիքները աշխատում են միասին:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(մասնակցելով առարկայական դասի).* Խնդրեք չորս երեխայի գալ դասարանի առաջ: Խնդրեք յուրաքանչյուր երեխայի պահել մեկ լարի ծայրը, իսկ դուք պահեք բոլոր չորս լարերի ծայրերը: Խնդրեք երեխաներին միասին պտտել լարերը, պարան դարձնելով: Նշեք, որ ճիշտ ինչպես միասին լարերը պտտելը ամուր պարան է ստեղծում, միասին աշխատելը կարող է ամուր ընտանիք ստեղծել: Հետևյալ բառերից յուրաքանչյուրը առանձին բառաշերտի վրա գրեք. *Հաջողակ, ընտանիքները, աշխատում են, միասին:* Կցեք բառաշերտերը պարանին: Խնդրեք երեխաներին միասին կարդալ նախադասությունը:

**Օգնեք հասկանալ** *(դերակատարությամբ).* Ցույց տվեք Նոյի նկարը և համառոտ պատմեք, թե ինչպես Նոյը տապան կառուցեց և հավաքեց կենդանիների՝ նախապատրաստվելով ջրհեղեղին (տես Ծննդոց 6–7, Մովսես 8): Երեխաներին բաժանեք խմբերի և խնդրեք յուրաքանչյուր խմբի դերակատարել իր ձևով, թե ինչպես Նոյի ընտանիքն աշխատեց միասին (հավաքելով փայտ տապանի համար, կառուցելով տապանը և միասին հավաքելով կենդանիներին): Հրավիրեք մյուս երեխաներին կռահել, թե ինչ են նրանք անում: Բացատրեք, որ Նոյի ընտանիքը հաջողակ էր, աշխատելով միասին:

**Խրախուսեք կիրառել** *(նկարելով).* Բացատրեք, որ ինչպես Նոյի ընտանիքն աշխատեց միասին, մեզ համար կարևոր է միասին աշխատելը մեր ընտանիքներում: Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թուղթ և մատիտներ և խնդրեք նրանց նկարել իրենց ընտանիքներին միասին աշխատելիս: Մի քանի երեխայի հրավիրեք կիսվել իրենց նկարներով և բացատրել, թե ինչպես է այն, ինչ իրենք նկարել են, օգնում իրենց ընտանիքներին հաջողակ լինել




*Առարկայական դասերը «կապում են անտեսանելի զաղափարները . . . որոշ տեսանելի առարկաների հետ, որոնց մասին աշակերտն արդեն իսկ գիտի, և այնուհետև կառուցում են այդ գիտելիքի հիման վրա» (Բոյդ Ք. Փաքեր, ՈՒՉԱՄԿ, 163):*

**Սուրբ գրություններ.** *Երբ երեխաներին խնդրեք կարդալ իրենց սուրբ գրություններից, դա կամրապնդի սուրբ գրությունների կարևորությունը և կիրավիրի Հոգին: Հնարավորության դեպքում, խնդրեք երեխաներին նշել հատվածներ իրենց սուրբ գրություններում, ապա միասին կարդալ դրանք:*

Նոյեմբեր

# Հիսուս Քրիստոսի ուսմունքներով ապրելն ամրացնում է ինձ և իմ ընտանիքին

*«Ընտանեկան կյանքում երջանկության հասնելու ամենամեծ հավանականությունն այն դեպքում է, երբ ընտանիքը հիմնված է Տեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***

## Շաբաթ 1. «Եթե դուք ունեք հավատք, դուք հույս ունեք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են» (Ալմա 32.21):

**Առանձնացրեք վարդապետությունը** *(մտապահելով սուրբ գրությունը).* Գրեք գրատախտակին. «Եթե դուք ունեք հավատք, դուք հույս ունեք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են»: Խնդրեք երեխաներին միասին բարձրաձայն կարդալ այն մի քանի անգամ, ապա ջնջել բոլոր բառերի տառերը՝ բացի առաջին տառից: Խնդրեք երեխաներին նորից այն արտասանել: Ամեն անգամ ջնջեք մեկ տառը, մինչև որ երեխաները կարողանան անգիր կրկնել սուրբ գրությունը:

**Օգնեք հասկանալ** *(լսելով սուրբգրքյան պատմություն).* Խնդրեք երեխաներին նկարագրել, թե ինչպես են իրենք իմանում, որ արդեն գիշեր է: Ցույց տվեք Սամուել Լամանացու նկարը և բացատրեք, որ նա մարգարեացել էր, որ այն գիշերը, երբ կծնվեր Հիսուս Քրիստոսը, արևը մայր կմտներ, սակայն խավար չէր լինի: Խնդրեք երեխաներին վերապատմել Հելաման 16 և 3 Նեփի 1.1–13 հատվածների իրադարձությունները (կարող եք խնդրել մի քանի երեխայի նախապես պատրաստվել պատմելու այդ պատմությունը): Խնդրեք երեխաներին արտասանել իրենց մտապահած սուրբ գրությունը և հարցրեք նրանց, թե ինչպես Նեփիացի հավատացյալները հավատք ցույց տվեցին: Հարցրեք երեխաներին, թե, իրենց կարծիքով, ի՞նչ պատահեց հավատացյալների հետ: Մի երեխայի խնդրեք կարդալ 3 Նեփի 1.15, 19: Վկայեք հավատքի կարևորության մասին

## Շաբաթ 2. Աղոթքը ակնածալի հաղորդակցում է Երկնային Հոր հետ:



**Առանձնացրեք վարդապետությունը** *(գտնելով առարկաներ և նկարներ).* Երեխաների Խմբի դասից առաջ հավաքեք կամ նկարեք առարկաներ, որոնց օգնությամբ մարդիկ հաղորդակցվում են (օրինակ՝ նամակ, հեռախոս, համակարգիչ), և թաքցրեք նկարները սենյակում մի քանի աթոռների տակ: Խնդրեք երեխաներին պատկերացնել, թե իրենք հեռու են տնից և պետք է կապվեն իրենց ընտանիքի հետ: Խնդրեք նրանց նայել աթոռների տակ, գտնել թաքնված նկարները և քննարկել, թե ինչպես դրանք կարող են օգնել մեզ հաղորդակցվել միմյանց հետ: Բացատրեք, որ երբ մենք եկանք երկիր, մենք հեռացանք մեր երկնային տնից, սակայն մենք դեռ կարող ենք հաղորդակցվել

մեր Երկնային Հոր հետ: Հարցրեք երեխաներին. «Ինչպե՞ս մենք կարող ենք հաղորդակցվել Երկնային Հոր հետ»: Ցույց տվեք երեխաներին աղոթող երեխաների և ընտանիքների մի քանի նկարներ: Բացատրեք, որ յուրաքանչյուր նկարը ցույց է տալիս ակնածալի հաղորդակցում՝ սիրով և հարգանքով աղոթք Երկնային Հորը: Խնդրեք երեխաներին ասել. «Աղոթքը ակնածալի հաղորդակցում է Երկնային Հոր հետ»:

**Օգնեք հասկանալ և կիրառել** *(գրատախտակի վարժություն).* Գրատախտակին գրեք աղոթքի չորս մասերը: Խնդրեք երեխաներին թվարկել, թե ինչի համար մենք կարող ենք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը, և թե ինչ կարող ենք խնդրել Նրանից: Նրանց պատասխանները գրեք գրատախտակին: Խնդրեք երեխաներին ցույց տալ, թե ինչպես կարող ենք ակնածանք դրսևորել, երբ աղոթում ենք:

## Շաբաթ 3. Ապաշխարությունը մտքի և սրտի փոփոխություն է:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(բացելով նկար).* Պատրաստեք բառաշերտեր հետևյալ նախադասության բառերով՝ «Ապաշխարությունը մտքի և սրտի փոփոխություն է»: Բառաշերտերով ծածկեք իրենց զենքերը թաքցնող Անթի-Նեփի-Լեքիների նկարը: Խնդրեք մի քանի երեխայի վերցնել բառաշերտերը նկարի վրայից և ճիշտ հերթականությամբ դնել գրատախտակին: Խնդրեք երեխաներին միասին կարդալ նախադասությունը, կատարելով համապատասխան շարժումներ *միտք* և *սիրտ* բառերի համար:

**Օգնեք հասկանալ** *(լսելով սուրբ գրքյան պատմություն).* Ասացեք երեխաներին, որ Մորմոնի Գրքում կար մարդկանց մի խումբ, ովքեր ունեցան սրտի փոփոխություն: Պատմեք հետևյալ պատմությունը (տես Ալմա 24). «Ամմոնը մի խումբ Լամանացիների սովորեցնում է ավետարանի մասին: Նրանք ամբարիշտ մարդիկ էին, բայց հավատացին նրան, ինչ Ամմոնն ուսուցանեց իրենց, և ունեցան սրտի փոփոխություն: Նրանք ցանկացան միանալ Եկեղեցուն, ուստի, ապաշխարեցին իրենց մեղքերից, խոստացան, որ չէին կռվի և թաղեցին իրենց զենքերը: Նրանք փոխեցին իրենց անունը Անթի-Նեփի-Լեքի և դարձան քրտնաջան աշխատող արդար մարդիկ»:

**Խրախուսեք կիրառել** *(թաղելով «թրերը» և երգելով).* Յուրաքանչյուր երեխայի մի թուղթ տվեք: Խնդրեք երեխաներին նկարել մի թուր և իրենց թրի վրա գրել սխալ ընտրություն (օրինակ՝ «կռվել եղբորս հետ» կամ «ստել»): Խնդրեք երեխաներին ասել, թե ինչ եղանակներով կարող են ընտրել ճիշտը և «թաղել» իրենց թրերը, ճմռելով իրենց թղթերը կամ դեն գցելով դրանք: Երգեք «Ապաշխարություն» երգը (*ԵԵ,* 98):

## Շաբաթ 4. Ներումը խաղաղություն է բերում:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(առարկայական դաս).* Հարցրեք երեխաներին, թե ինչպես իրենց կզգային, եթե որևէ մեկը հրեր կամ հարվածեր իրենց: Ցույց տվեք մի մեծ քար և ասացեք երեխաներին, որ այն ներկայացնում է իրենց վիրավորված զգացմունքները: Քարը դրեք մի երկար գուլպայի մեջ: Երեխաներից մեկին խնդրեք գալ առաջ և կապել գուլպան իր ծնկին: Խնդրեք նրան քայլել սենյակով: Քննարկեք, թե ինչպես կարող է վատ զգացմունքից կախված լինելը մեզ դեպի վար քաշել: Բացատրեք, որ երբ մենք ներում ենք մարդկանց, ովքեր վիրավորել են մեզ, մենք ազատվում ենք այդ վատ զգացմունքներից: Երեխային թույլ տվեք արձակել գուլպան: Խնդրեք երեխաներին ասել. «Ներումը խաղաղություն է բերում»:

**Օգնեք հասկանալ** *(լսելով սուրբգրքյան պատմություններ).* Մի քանի օր առաջ խնդրեք ղեկավարներին կամ ուսուցիչներին պատրաստվել կիսվել ներման մասին հետևյալ սուրբգրքյան պատմություններից որևէ մեկով:

1. Հիսուսը ներում է խաչի վրա (տես Ղուկաս ԻԳ.13–34):
2. Նեփին ներում է իր եղբայրներին (տես 1 Նեփի 7.6–21):
3. Հովսեփը ներում է իր եղբայրներին (տես Ծննդոց 37, 41–45):

Երեխաներին երեք խմբի բաժանեք: Յուրաքանչյուր խմբին ուղարկեք սենյակի մի ծայրը (տես «Կայարաններ», *ՈՒՉԱՄԿ,* 179), որտեղ ղեկավարը կամ ուսուցիչը համառոտ կքննարկեն նրանց հետ սուրբգրքյան պատմությունը, որը պատրաստել են: Երբ յուրաքանչյուր խումբ այցելի բոլոր կայարանները, երգեք «Օգնիր ինձ, Միրելի Հայր» երգը (*ԵԵ,* 99):

**Խրախուսեք կիրառել** *(կիսվելով զգացմունքներով).* Խնդրեք մի քանի երեխայի պատմել այն ժամանակի մասին, երբ իրենք ներել են որևէ մեկին, և դա նրանց օգնել է խաղաղություն զգալ:

**Կայարաններ.** *Եթե ձեր Երեխաների Խումբը մեծ է, ապա կարող եք խնդրել, որ երեխաների փոխարեն ղեկավարները տեղափոխվեն կայարանից կայարան:*

**Փոքր խմբեր.** *Երբ փոքր խմբերում խնդրում եք երեխաներին կիսվել իրենց մտքերով, ավելի շատ երեխաներ են մասնակցելու հնարավորություն ունենում: Միացյալ ժամին երեխաներն արդեն խմբերով են նստում դասարանում: Այդ խմբերը հարմար են փոքր խմբային վարժությունների համար: Դասարանի ուսուցիչները կարող են օգնել, որպեսզի երեխաները մասնակցեն և օգնեն պահպանել ակնածանքը:*

Դեկտեմբեր

# Մենք հիշում և երկրպագում ենք մեր Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին

*«Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը. ոչ ոք չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձանով» (Հովհաննես ԺԴ.6):*

*Լրացրեք այս բաժնում տրված մտքերը ձեր սեփական մտքերով: Մտածեք, թե ինչ եղանակներով կարող եք առանձնացնել երեխաների համար վարդապետությունը և օգնել նրանց հասկանալ այն և կիրառել կյանքում:* ***Հարցրեք ինքներդ ձեզ. «Ի՞նչ պետք է անեն երեխաները, որպեսզի սովորեն, և ինչպե՞ս կարող եմ ես օգնել նրանց զգալ Հոգին»:***



## Շաբաթ 1. Հաղորդությունը Հիսուս Քրիստոսին հիշելու ժամանակն է:

**Օգնեք հասկանալ** *(համապատասխանեցնելով սուրբ գրությունները նկարներին).* Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. Ղուկաս Բ.7, Մարկոս Ժ.13, 16, Մատթեոս ԻԶ.36, 39, Հովհաննես ԺԹ.17–18, Հովհաննես Ի.11–16: Ամբողջ սենյակով տեղավորեք նկարներ, որոնք պատկերում են այդ սուրբ գրությունների հատվածներում նկարագրվող իրադարձությունները (*ԱԱԳ* 30, 47, 56, 57, և 59): Ասացեք երեխաներին, որ հաղորդությունը մի ժամանակ է, երբ հիշում ենք, թե որքան շատ է Հիսուս Քրիստոսը սիրում մեզ և թե ինչ է Նա արել մեզ համար: Մի երեխայի խնդրեք կարդալ սուրբ գրությունների հատվածներից մեկը: Մյուսին խնդրեք ընտրել դրան առնչվող նկարը և բերել բոլորի առաջ: Կրկնեք մնացած սուրբ գրությունների համար:

**Խրախուսեք կիրառել** *(խաղալով հիշելու խաղ).* Մեղանին դրեք մի քանի առարկաներ, օրինակ՝ Գեթսեմանիում Քրիստոսի նկարը, Վերջին Ընթրիքի նկարը, հացի մի կտոր, հաղորդության բաժակ, հաղորդության սկուտեղներ, սուրբ գրքեր և երգարան: Խնդրեք երեխաներին արագ նայել առարկաներին, ապա ծածկեք դրանք: Խնդրեք երեխաներին խմբերով գրի առնել այն, ինչ հիշեցին: Խնդրեք երեխաներին բացատրել, թե ինչպես կարող է յուրաքանչյուր առարկան օգնել նրանց հիշել Հիսուս Քրիստոսին հաղորդության ժամանակ

## Շաբաթ 2. Հիսուս Քրիստոսին հիշելն օգնում է ինձ ընտրել ճիշտը:

**Առանձնացրեք վարդապետությունը** *(լսելով սուրբ գրություններ).* Հրավիրեք երեխաներին փակել իրենց աչքերը և պատկերացնել, թե ինչպիսին կլիներ կյանքը, եթե բոլորը ճիշտ ընտրություններ կատարեին: Խնդրեք նրանցից մի քանիսին կիսվել նրանով, թե ինչ իրենք պատկերացրեցին: Ասացեք նրանց, որ Մորմոնի Գրքում կար մի ժամանակ, երբ այդպես էր արվում, և խնդրեք նրանց լսել այդ ժամանակների նկարագրությունը, երբ մի երեխա կարդա 4 Նեփի 1.15, 17: Բացատրեք, որ մարդիկ կարողանում էին ընտրել ճիշտը, որովհետև շատ հատուկ մի բան էին հիշում: Պատմեք կրկին 3 Նեփի 17.20–25-ի իրադարձությունները: Հրավիրեք երեխաներին միասին ասել. «Հիսուս Քրիստոսին հիշելն օգնում է ինձ ընտրել ճիշտը»:

*Վարդապետության մասին երգերը օգնում է երեխաներին սովորել և հիշել այն: Երեխաները նաև ավելի լավ են սովորում, երբ նրանք տեսնում են ցուցադրական նյութեր կամ վարժություն են կատարում երաժշտության հետ մեկտեղ:Այս ամսվա խորհուրդները մի շարք օրինակներ են տալիս, թե ինչպես կարելի է այս անել տարբեր ճանապարհներով: Այլ դասեր ծրագրելիս մտածեք նմանատիպ գաղափարների մասին:*

**Օգնեք հասկանալ և կիրառել** *(երգեր երգելով).* Ծածկեք Քրիստոսը օրհնում է Նեփիացի երեխաներին նկարը դատարկ թղթերով: Հրավիրեք երեխաներին մտածել երգերի մասին, որոնք օգնում են իրենց հիշել Հիսուս Քրիստոսին: Միասին երգեք այդ երգերից մի քանիսը: Յուրաքանչյուր երգից հետո երեխաներից մեկին խնդրեք հանել մի թուղթ նկարի վրայից: Կրկնեք, մինչև բոլոր թղթերը հանվեն: Քննարկեք, թե ինչպես կարող էին նկարի երեխաները ճիշտ ընտրություններ կատարել Հիսուսի հետ իրենց փորձառությունից հետո: Հիշեցրեք երեխաներին, որ երբ իրենք հիշում են Հիսուսին, իրենց ցանկանում են ընտրել ճիշտը: Խնդրեք նրանց թվարկել մի քանի բան, որոնք կարող են անել իրենց առօրյա գործերում Հիսուսին հիշելու համար:

**Կիսվեք նրանով, ինչ հասկացել եք.** *Երեխաները կզգան Հոգին կիսվելով ավետարանի սկզբունքների իրենց հասկացողությամբ: Նրանք կարող են իրենց խոսքերով, նկարներով և երգերով կիսվել, թե ինչ են սովորել:*

## Շաբաթ 3. Աստծո Որդին ծնվեց Երկրի վրա:

**Առանձնացրեք վարդապետությունը.** Հարցրեք երեխաներին. «Դուք երբևէ սպասե՞լ եք ինչ-որ հատուկ իրադարձության: Արդյո՞ք սպասելը երկար է թվացել: Ինչպե՞ս եք ձեզ զգացել, երբ վերջապես դա տեղի է ունեցել»: Երեխաներին հնարավորություն տվեք կիսվել իրենց զգացմունքներով: Բացատրեք, որ Ադամի և Եվայի ժամանակներից սկսած մեր Երկնային Հայրը խոստացել էր, որ շատ կարևոր իրադարձություն տեղի կունենար: Արդար մարդիկ անհամբեր սպասում էին դրան: Մեղմորեն շշնջացեք երեխաների փոքր խմբի. «Աստծո Որդին ծնվեց Երկրի վրա»: Խնդրեք նրանց շշնջալ այդ նախադասությունը մյուս երեխաներին, ապա խնդրեք բոլոր երեխաներին շշնջալ դա միասին:

**Օգնեք հասկանալ** *(կիսվելով պատմությամբ և երգելով երգ).* Խնդրեք երեխաներին պատմել, թե ինչ իրենք գիտեն Հիսուսի ծննդի մասին (տես Ղուկաս Բ.1–20): Լրացրեք պատմությունը մանրամասներով, որոնք երեխաները չնշեցին: Երգեք «Աստղերը շողում են» երգը (*ԵԵ,* 37) և հրավիրեք երեխաներին պատկերացնել, թե ինչ զգացին հովիվները, երբ լսեցին հրեշտակների երգը:

**Խրախուսեք կիրառել** *(պատրաստելով Սուրբ Ծննդյան բացիկ).* Յուրաքանչյուր երեխայի տվեք մի թուղթ և մատիտ կամ գունամատիտներ: Օգնեք նրանց ծալել թուղթը շնորհավորման բացիկի տեսքով: Խնդրեք նրանց պատրաստել Սուրբ Ծննդյան բացիկ իրենց ընտանիքի համար, նկարելով Հիսուս Քրիստոսի ծնունդը: Դիմացի մասում խնդրեք նրանց գրել «Աստծո Որդին ծնվեց Երկրի վրա»

## Շաբաթ 4. Հիսուս Քրիստոսը կրկին կգա:

**Օգնեք հասկանալ** *(կարդալով սուրբ գրություններ).* Պատրաստեք հետևյալ բառաշերտերը (տես առցանց՝ sharingtime.lds.org կայքում).

Միայն Երկնային Հայրը գիտի ճշգրիտ _____ , երբ Հիսուսը կրկին կգա (տես Ջոզեֆ Սմիթ-Մատթեոս 1.40):

Հիսուսը կիջնի ներքև _____ (տես Գործք Ա.11):

Հիսուսը կկրի _____ հագուստներ (տես ՎևՈւ 133.48):

Կեղծ Քրիստոսներ _____ շատերին (տես Ջոզեֆ Սմիթ-Մատթեոս 1.22):

Ամբարիշտները _____ (տես ՎևՈւ 29.9):

Արևը _____ (տես ՎևՈւ 45.42):

Երբ Հիսուսը գա, Նա կլինի ավելի պայծառ, քան _____ (տես ՎևՈւ 133.49):

Հիսուս Քրիստոսը կապրի արդարների հետ _____ տարի՝ Իր Երկրորդ Գալստից հետո (տես ՎևՈւ 29.11):

Երեխաներին բաժանեք խմբերի և տվեք յուրաքանչյուր խմբի մեկ կամ երկու բառաշերտ: Խնդրեք նրանց գտնել բառերը, որոնք լրացնում են բացթողնված տեղերը, կարդալով սուրբ գրությունները: Խնդրեք յուրաքանչյուր խմբի կիսվել մնացած երեխաների հետ նրանով, ինչ իրենք սովորեցին:

**Խրախուսեք կիրառել** *(երգելով և կիսվելով).* Բացատրեք, որ մենք պետք է հիշենք և երկրպագենք Հիսուս Քրիստոսին ամեն օր, որպեսզի պատրաստվենք Նրա Երկրորդ Գալստին: Խնդրեք երեխաներին թվարկել մի քանի բան, որ կարող են անել իրենք և իրենց ընտանիքները, որպեսզի պատրաստված լինեն: Երգեք «I Wonder When He Comes Again» (*ԵԵ,* 82):

**Վկայեք.** *Դասի ցանկացած պահին հակիրճ վկայությունը կարող է հրավիրել Հոգին: Վկայության պաշտոնական լեզուն, օրինակ՝ «Ես ուզում եմ բերել իմ վկայությունը», անհրաժեշտ չէ ճշմարտության մասին վկայելու համար: Վկայությունը կարող է լինել շատ հասարակ, օրինակ՝ «Ես գիտեմ, որ Հիսուս Քրիստոսն ապրում է»:*

# Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում

*Երեխաների Խմբում երաժշտության նպատակը երեխաներին սովորեցնելն է Հիսուս Քրիստոսի ավետարանը և օգնելը նրանց ապրել դրանով: Երեխաների երգերը սովորելն ավելի հաճելի են դարձնում, երեխաներին օգնում են սովորել և հիշել ավետարանի ճշմարտությունները և հրավիրել Հոգին Երեխաների Խումբ:*

*Ստորև տրվում են օրինակներ, թե ինչպես դուք կարող եք ուսուցանել այս ծրագրում առաջարկվող երգերը: Դուք կարող եք օգտագործել այս եղանակները Երեխաների Խմբի այլ երգեր ուսուցանելիս ևս: Լրացուցիչ մտքերի համար տես «Ինչպես օգտագործել երաժշտությունը Երեխաների Խմբում» բաժինները միացյալ ժամերի նախորդ ծրագրերում:*

## Հունվար. «Նա ուղարկեց Իր Որդուն» (*ԵԵ*, 34–35)

Թույլ տվեք, որ երեխաները լսեն երգը: Նշեք, թե ինչպես է այն կազմված հարցերից և պատասխաններից: Երեխաների կեսին հանձնարարեք երգել հարցերը, իսկ մյուս կեսին՝ պատասխանները: Մի քանի անգամ երգելուց հետո երեխաներին խնդրեք փոխվել տեղերով: Երբ նրանք երգը լավ իմանան, կրկնողության համար տարբեր ձևերով կիսեք նրանց (օրինակ՝ տղաներ և աղջիկներ, ուսուցիչներ և երեխաներ, և այլն):

**Օգտագործեք բազմազանություն.** *Մտածեք, թե ինչպես կարող եք տարբեր ձևերով կրկնել երգերը: Երեխաները լավագույնս սովորում են երգերը, երբ լսում ու երգում են դրանք նորից ու նորից:*

## Փետրվար. «Ես կհետևեմ Աստծո Ծրագրին» (*ԵԵ*, 164–65)

Ասացեք երեխաներին, որ Աստված մեզ շատ հատուկ պարգև է տվել: Խնդրեք նրանց լսել, թե որն է այդ պարգևը, երգելով երգի առաջին տողը (ծրագիրը): Ցույց տվեք քարտեզ և համեմատեք ճանապարհ գտնելու համար քարտեզից օգտվելը Աստծո ծրագրին հետևելու հետ, որպեսզի վերադառնաք Նրա մոտ: Բացատրեք, որ այս երգն ուսուցանում է մեզ ծրագրի մասին և ասում, թե ինչպես մենք կարող ենք վերադառնալ Երկնային Հոր հետ ապրելու: Ցույց տվեք երգից կարևոր խոսքերը պատկերող նկարներ (օրինակ՝ *պարգևը, երկինքը, տունը, երկիրը* և *ծնունդը*) և գրված որոշ բառեր (օրինակ՝ *ծրագիրը, նպատակը, ընտրությունը* և *ուղղություն տալը*), որոնք ցրված են սենյակով մեկ: Խնդրեք երեխաներին հավաքել դրանք և բարձրացնել ճիշտ հերթականությամբ, երբ երգում եք: Խնդրեք նրանց երգել ձեզ հետ միասին, նայելով նկարներին և բառերին

## Մարտ. «Ես մնում եմ զարմացած», (*Հիմներ և մանկական երգեր*, էջ 193):

Երեխաներին բաժանեք չորս խմբերի: Տվեք խումբ 1-ին *ԱԱԳ* 116, և երգեք նրանց համար երգի առաջին արտահայտությունը: Համառոտ քննարկեք այն, ապա խնդրեք երգել այն ձեզ հետ մի քանի անգամ: Շարունակեք բոլոր խմբերի հետ և բոլոր արտահայտությունների համար (օգտագործեք հետևյալ նկարները. խումբ 2, *ԱԱԳ* 108, խումբ 3, *ԱԱԳ* 57, խումբ 4, *ԱԱԳ* 56): Երգեք ամբողջ առաջին քառատողը յուրաքանչյուր խմբի հետ կանգնած, պահելով նրանց նկարը և երգելով նրանց արտահայտությունը: Խնդրեք խմբերին փոխանակել նկարները և նորից երգել երգը: Կրկնեք, մինչև որ բոլոր խմբերը երգեն բոլոր արտահայտությունները: Երգեք կրկներգը և խնդրեք երեխաներին լսել, թե քանի անգամ եք դուք երգում «զարմանալի» բառը: Կրկնեք նրանց հետ կրկներգը մի քանի նագամ և խնդրեք նրանց դնել իրենց ձեռքերը սրտի վրա ամեն անգամ, երբ երգում են «զարմանալի» բառը:

## Ապրիլ. «Ընտանիքն Աստծուց է» (այս ծրագրի էջեր 28–29)

Գտեք կամ նկարեք նկարներ, որոնք պատկերում են երգի բառերը կամ արտահայտությունները (նկարների նմուշներ կարելի է գտնել sharingtime.lds.org կայքում): Ցուցադրեք դրանք գրատախտակին ամեն անգամ, երբ երգում եք տվյալ արտահայտությունը երեխաների հետ: Արտահայտությունն ուսուցանելուց հետո երգեք բառերի մեծ մասը և կանգ առեք, թույլ տալով երեխաներին ավարտել արտահայտությունը: Մի քանի անգամ երգեք ամբողջ երգը միասին: Երեխաներից մեկին խնդրեք իջեցնել մեկ-երկու նկար և նորից երգեք երգը: Կրկնեք, մինչև որ նրանք կարողանան երգել երգն առանց նկարների:

## Հուլիս. «Մկրտություն» (*ԵԵ*, 100–101)

Պատրաստեք հետևյալ բառաշերտերը. *Ով, Երբ, Ինչպես,* և *Որտեղ:* Ցույց տվեք մկրտվող Հիսուս Քրիստոսի նկարը: Դրեք «Ով» բառաշերտը նկարի կողքին: Խնդրեք երեխաներին լսել, թե ում մոտ էր եկել Հիսուսը, երբ երգեք երգի առաջին նախադասությունը: Պատասխաններ ստանալուց հետո խնդրեք երեխաներին երգել այդ նախադասությունը ձեզ հետ միասին: Կրկնեք նույնը բոլոր մնացած բառաշերտերի և արտահայտությունների համար: Միասին երգեք առաջին քառատողը: Ձեր գտած պատասխաններից մեկով բառաշերտը տվեք յուրաքանչյուր երեխայի (*Հովհաննես Մկրտիչը, շատ առաջ, ընկղմամբ* և *Հորդանան գետ*): Խնդրեք երեխաներին կանգնել, երբ հնչեն իրենց բառերը: Խնդրեք նրանց փոխանակել բառաշերտերը և կրկնել վարժությունը:

**Պարապեք.** *Երգն արդյունավետ ուսուցանելու համար դուք պետք է ինքներդ իմանաք երգը: Տանը պարապեք, որպեսզի երեխաներին սովորեցնելիս կարողանաք նայել նրանց, ոչ թե գրքին:*

## Օգոստոս. «Վաղ փնտրեք Տիրոջը» (*ԵԵ*, 108)

Օգտագործեք նկարներ՝ երեխաներին արտահայտություն առ արտահայտություն երգ սովորեցնելու համար (նկարների նմուշներ կարելի է գտնել sharingtime.lds.org կայքում): Ցուցադրեք բոլոր նկարները գրատախտակին: Խնդրեք մի երեխայի դուրս գալ սենյակից, իսկ մեկ ուրիշը թող թաքցնի նկարներից մեկը: Խնդրեք երեխային վերադառնալ և «փնտրել» նկարը, լսելով մյուս երեխաներին, որոնք սկսում են ավելի բարձր երգել, երբ նա մոտենում է նկարին, կամ ավելի ցածր երգել, երբ հեռանում է նկարից: Կրկնեք, եթե ժամանակը թույլ է տալիս:

## Այս ծրագրում օգտագործված լրացուցիչ երգեր

### “Արդյոք Հիսուսը կրկին ապրեց” (*CS*, 64)

Գրեք առաջին քառատողի բառերը գրատախտակին կամ մեծ թղթի վրա: Երգեք այդ քառատողը երեխաներին և համառոտ քննարկեք այն: Երգեք այն միասին և խնդրեք մեկին, ով լավ երգեց, ջնջել կամ կտրել բառերից մեկը: Կրկնեք, մինչև երեխաները սովորեն քառատողը, ապա կրկնեք նույնը մյուս քառատողերի համար:

### «Իմ Երկնային Հայրը սիրում է ինձ» (*ԵԵ*, 228–29)

Խնդրեք երեխաներին ծափ տալ ռիթմը, երբ երգում եք երգը, օգնելով նրանց ծանոթանալ մեղեդու հետ: Օգնեք նրանց կատարել պարզ շարժումներ՝ համապատասխան երգի կարևոր բառերի: Խնդրեք երեխաներին կատարել շարժումներն առանց երգելու, երբ հնչում է միայն երաժշտությունը, ապա երգել և կատարել շարժումները միաժամանակ: (Այս երգն ուսուցանելու համար օգնող նկարներ կարելի է գտնել sharingtime.lds.org կայքում:)

### «Ընտանիքները հավերժ են» (*ԵԵ*, 188)

Խնդրեք երեխաներին վարել և երգել ձեզ հետ միասին, շեշտելով մեղեդու կրկնվող հատվածները, օրինակ՝ «այստեղ՝ երկրի վրա» և «լավ է ինձ համար»: Տվեք պարզ հարցեր, օրինակ՝ «Ե՞րբ մենք պետք է պատրաստվեք տաճարին», և խնդրեք երեխաներին պատասխանել, երգելով երգից հատվածներ: Պարզ ցուցանակներ օգտագործելով, հրավիրեք երեխաներին ներկայացնել ընտանիքի անդամներին և ղեկավարել խմբեր, որոնք երգում են որոշակի հատվածներ:

### «Սեր է հնչում այստեղ» (*ԵԵ*, 190–91)

Հարցրեք, թե ինչ լեզուներով են խոսում երեխաների տներում: Երգեք երգի առաջին քառատողը և հրավիրեք երեխաներին լսել լրացուցիչ լեզուն և դնել իրենց ձեռքերը իրենց սրտին, երբ լսեն դա (սեր): Երբ դուք երգում եք, խնդրեք նրանց լսել հանգավորված բառերը և այն բառերը, որոնք չեն հասկանում: Խնդրեք աղջիկներից մեկին գրել դրանք գրատախտակին առաջին քառատողի ժամանակ, իսկ տղաներից մեկին՝ երկրորդ քառատողի ժամանակ: Սահմանեք բառերը և երգեք այդ արտահայտությունները, խնդրելով երեխաներին կրկնել ձեր ետևից:

### «Ես ապրում էի երնքում» (*ԵԵ*, 4)

Երեխաներին բաժանեք չորս խմբերի և հանձնարարեք յուրաքանչյուր խմբին մի արտահայտություն երգից: Յուրաքանչյուր խմբի տվեք մեկական թուղթ և խնդրեք նրանց նկարել այդ արտահայտությանն առնչվող պարզ նկար: Միասին երգեք երգը, օգտագործելով նկարը որպես տեսողական նյութ:

# Ընտանիքն Աստծուց է

*Խոսք և երաժշտություն՝*
Մեթյու Նիլի

*Չվարք* ♩ = 76–88

F B♭ F B♭ F C7

F C7 F Dm B♭ F

1. Մեր Հայրն ըն-տա-նիք ու-նի: Դա ես եմ, Դու, նա, բո-լո-րըս՝ Նը-րա զա-վակ-
2. Հայրն ա-պա-հո-վում է, ղե-կա-վա-րում, Սի-րում ու ա-վե-տա-բանն ու-սու-
3. Մայ-րը հոգ է տա-նում և խը-նա-մում, Զա-վակ-նե-րին ի-ռենց բո-լոր զո-
4. Իմ ըն-տա-նի-քին ես միշտ կը-սի-րեմ, Նը-րանց հա-մար լավ օ-րի-նակ կը-

C7 F C Dm F

ներն ենք: Մեզ ու-ղար-կել է եր-կիր ապ-րե-լու, Ըն-
ցա-նում, Ըն-տա-նի-քին օգ-նում ա-ղոթ-քով իր Կիս-
դաց-նում: Սո-վո-ռեց-նում սի-ռել ու ա-ղո-թել Եվ
լի-նեմ, Եվ երբ մի օր ես մայր կամ հայր դառ-նամ, Ըն-

B♭ F C7 F B♭

տա-նի-քում սո-վո-ռե-լու:
վել սիրով Հոր հետ Երկ-նա-յին: Աստ-ված մեզ
ըն-տա-նի-քում ծա-ռա-յել:
տա-նի-քիս կօգ-նեմ հի-շել.

© 2008 by Matthew Neeley. Բոլոր իրավունքները վերապահված են:
Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:
Այս ծանուցումը պետք է ներառվի յուրաքանչյուր օրինակի մեջ:


C7 F B♭ F G7 C7
ըն - տա - նիք տը - վեց, որ դառ - նանք այն, ինչ ու - զում է Նա,
F B♭ C7 Dm B♭ Gm
Այդ - պես Նա սեր ցույց տը - վեց, երբ ըն - տա - նիք
F C7 1.2.3. F B♭ F C7
մեզ տը - վեց:
4. F B♭ F B♭ F
վեց:
(o)

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 2/13:
Թարգմանության հաստատումը. 2/13: *2014 Outline for Sharing Time: Families Are Forever.* Armenian. 10940 201-ի թարգմանությունը

ARMENIAN
4 02109 40201 1
10940 201